Michael E. Stone has observed that in Armenian literature ‘Adam’s naming of the creatures was a major topic in the fifth century but disappears from the discussion in the sixth to the ninth centuries’ (M. E. Stone, *Adam and Eve in the Armenian Traditions. Fifth Through Seventeenth Centuries*, Atlanta 2013, p. 57). Significantly, when it reappears in the tenth century, this scene from Genesis is often interpreted as a reflection of Adam’s royal prerogative. This has to reflect the new political realities of Armenia, i.e. the restoration of Armenian kingship first in the north and then in the south of the country: the figure of the first human being was present in Armenia as a *typos* of a new Christian king.

Right above Adam, who is flanked by two animal heads, is represented a crowned figure flanked by two attendants. Also the medallion-like frame of this image links it semantically with Adam: Adam reigning in the midst of other creatures thus represents the main prototype of kingship. To our knowledge, such a representation of Adam—which establishes a new relationship between the topography of a church, its architectural structure and its decoration—has no parallels in early and mediæval Christian art.

Թաջարյան Իվեթ, Ավետիսյան Անի - Tajarian
Yvette, Avetisyan Ani- Տաջարյան Իվետ, Ավետիսյան
Անի

Արևելյան ձեռագրերի կեղծման արվեստն ըստ
Մատենադարանի արաբատառ հավաքածոյի Հմr 137
ձեռագիր օրինակի

Ձեռագիր Հմr 137-ը ընդգրկված է Մատենադարանի արաբատառ ձեռագրերի հավաքածուի մեջ: Նախկինում ձեռագիրը եղել է Էջմիածնի մատենադարանի արաբատառ հավաքածուի (1880 թ., թվով՝ 201 ձեռագիր) հիմնական կազմի մեջ, որի հիմքի վրա ել ձևավորվել է Մատենադարանի արաբատառ հավաքածուն:

Ձեռագրի արտաքին և բովանդակային առաջին անդրադաներն ընդգրկված են Մատենադարանի 1940-ական թվականներին կազմված Անտիպ ձեռագրացուցակում և 1948 թ. կազմված ցուցակում: Վերջինիս նկարագրությունում ձեռագրի վերնագիր նշվել է Ֆուգուլիի «Լեյլի և Մեջնուն»-ը: Լեզուն համարվել է՝ «ազերբայջաներեն» (այսինքն՝ աղրբեջաներեն), իսկ գրչության թվական՝ պայմանականորեն ԺL դար, գրչի անուն՝ Մուհամմադ Յուսուֆ Ջիհան Շահին, հիշատակվում է նաև, որ ձեռագրում նկարների քանակը՝ 18-ն են և պատկերված են Լեյլիի, Մեջնունի, նրա հոր՝ Նոֆելիի և իբնե Սալամի նկարները:

Զեկույցը բաղկացած է երկու բաժնից՝ ձեռագրագիտական և արվեստաբանական վերլուծություն:

Զեկույցում մասնավորապես անդրադարձ է լինելու ձեռագրագիտական մանրամասնություններին, ճշգրտվելու են նախկին նկարագրության մեջ հաղորդված արտաքին և բովանդակային տվյալները, քննվելու են բնագրում կատարված շեղումներն ու հավելագրությունները, ինչպես նաև՝ այլ ձեռքով բնագրում կատարված միջամտությունները:

Քննվելու են արևելյան ձեռագրերի կեղծման հանգամանքները, նպատակները՝ ե՞րբ և ի՞նչ պայմաններում են ձեռագրերը

կեղծվել, կեղծարարները ի՞նչ հնարքների են դիմել, ինչու՞ են մինչ օրս, հատկապես արևելյան ձեռագրերը կեղծվում: Այս հենքի վրա քննվելու են ձեռագրի մանրանկարները. դիտարկվելու և արժենորվելու են արվեստաբանական տեսանկյունից: Նկարագրման են ենթարկվելու մանրանկարչի ձեռագիրը՝ գիծը, գույնը, ոճը, հորինվածքային լուծումները և այլն: Մանրամասն ուսումնասիրվելու և խոսվելու է քնագրի և մանրանկարների կապի մասին:

Ժամկոչյան Աղավնի - Jamkochyan Aghavni - Жамкочян Агавни

Դվինի ամիրայությունը և Շեղադյանները

Արամ Տեր-Ղևոնդյանի «Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում» մենագրությունը հայագիտության ոսկե ֆոնդի մնայուն արժեքներից է: Հայկական և արաբական սկզբնադրյուրների հենքով շարադրված այս աշխատանքի էջերում, ի շարս բազմաթիվ հարցերի, հայագետը պատշաճ մակարդակով տվել է Դվինի ամիրայության Շեղադյան տոհմի երրորդ ժառանգ Աբով Ասուարի գործունեության պատմաքաղաքական գնահատականը: Սույն կարճառոտ հաղորդման շրջանակում Դվինի հնագիտական պեղումների առատ մեջբերումով կփորձենք ներկայացնել նրա շինարարական առևտրատնտեսական և մշակութային դաշտը, որ խոսուն փաստարկներով վստահելի են դարձնում նրա առաջնորդի կերպարի համարումը: Թդարի երկրորդ կեսից արաբական խալիֆայության քայլայման արշալույսին սկսվել էր այդ տիրակալության մեջ ամփոփված երկրների քաղաքական քարտեզի փոփոխության գործընթացը: Այն ընթանում էր ամիրայական զանգվածների քաղաքական ինքնորոշման ձգտումով, պատվասիրությամբ տառապող առաջնորդների միջև պայքարի սուր դրսուրումներով և անկառավարելի ռազմարշավներով, որոնց հետևանքով տեղի էին ունենում

ավերածություններ և ժողովրդի բոնի տեղահանության գործողություններ: Դվինում այդ իրադարձությունների առանցքում սկզբում Սաջաններն էին, ապա Սալարյանները, որոնք, ժամանակ առ ժամանակ դելմիկների զինական ներուժը յուրացնելով, Դվինը վերածել էին քառի: Կար և Բագրատունիների՝ Դվինը մայրաքաղաք դարձնելու հայրենասիրական մոտեցումը, որ վերոհիշյալ թնջուկային խառնաշփոթի հետևանքով մարեց: Խաղաղ պահերից մեկի ժամանակ՝ 1022 թ., Դվինում հայտնվեց Աբով Ասվարը, որ շուրջ 28 տարի կառավարեց քաղաքն ու շրջակայքով մեկ կազմավորեց քաղաքական ամիրայությունը: Ժառանգելով ավերված քաղաքը*, նա ձեռնամուխ եղավ պարսպաշինության և բնակարանաշինության գործի կարգավորմանը: Առաջին դեպքում նախորդ ավերածությունների վերանորոգումների հետքերը մեր կողմից արձանագրվեցին Դվինի միջնաբերդի հարավային հատվածի պարիսպների՝ 2006-2013 թթ. պեղումների ժամանակ, երբ ամրաշինական աշխարհում գործող տեխնոլոգիայով կրաքարի խիտ կուտակումներին հետևում էին հում աղյուսի զանգվածների կանոնավոր շարվածքները: Այդ նորոգումը ի նպաստ եր քաղաքի բնակչության ապահովման համար, որովհետև Անին գրավելուց հետո՝ 1045 թ., Բյուզանդիան արշավեց Դվին և անհաջողության մատնվեց: Իհարկե, չպիտի անտեսել նաև Աբով Ասվարի մարտավարական հնարամտության մեծ դերակատարությունը, որը, Ազատ գետի հունը փոխելով, շրջապատում տղմու միջավայր ստեղծեց և թշնամուն մեծ կորուստների գնով քաղաքից հեռացրեց: Աշխարհիկ բնակարանաշինության ավերակները Դվինում արձանագրված են Կարո Ղաֆաղարյանի՝ 1950 թ. ստորին բերդի պեղումների արդյունքում, իսկ 1946-1950 թթ. միջնաբերդի գագաթին պեղված 120.000 քառ. մ 20x30 քացված շինությունը շրջակայրում գիպսե հարդարանքների և տերակոտաների մեծ կուտակումներով, որ լայնարձակ աղերսներ ունի ԺԱ դարի ամիրայությունների ողջ միջավայրում միջազգայնացված քաղաքաշինական կոթողներում: Աբով Ասվարը ոչ միայն հմուտ զորավար ու կազմակերպիչ էր, այլև քաջատեղյակ

Եր առևտրատնտեսական գործին: Նա ժամանակի պահանջներին համարայլ զարգացրեց այդ ոլորտները՝ Դվինը վերածելով վաճառաշահ հզոր կենտրոնի: Միայն արհեստային արտադրության բնագավառներից մեկի՝ խեցեգործության վիճակագրության քննությունը վկայում է, որ շատ տեսակներ մենաշնորհային պիտակավորում էին կրում, իսկ ներմուծած խմբաքանակները արտահայտում էին քաղաքի առևտրական լայնահուն կապերի մասշտաբները: Արծաթի սղության հետևանքով մասամբ անգործության էր մատնված դրամահատարանը, որ հատված թերև քաշի արծաթի դրամներով մրցունակ չէր բյուզանդական շրջանառվող ոսկե դրամների հետ:

Խոսրավի Թուրաջ, Զաֆարիան Ռաշուլ - Khosravi Touraj, Jafarian Rasoul - Խօսրավ Տորաջ, Джафарян Расул

Պավլիկյանների և Թոնդրակյանների շարժումները,
զաղափարները, նպատակները և անկումը (Է - ԺԱ դդ.)

Պավլիկյանների և Թոնդրակյանների շարժումները ստեղծվել են Է - ԺԱ դդ. ընթացքում՝ սոցիալական, իրավական և քաղաքական անհավասարության պատճառով դասակարգերի իշխող ֆեոդալների, հոգևորականների, նախարարների, եպիսկոպոսների և եկեղեցիների ղեկավարների ու ստորադաս շերտերի գյուղացիների, ֆերմերների և բանվորների միջև պայքարի ընթացքում:

Այն իր մտածմունքային սկզբունքների և արմատների հիմքերի վրա՝ նյութական ոեսուրսների և հարկային եկամուտների արդարացի բաժանումն էր իշխանության ու ժողովուրդների, հասարակության բոլոր շերտերի միջև:

Իրավական արդարության հաստատումը և նույնիսկ տղամարդկանց ու կանանց միջև հավասարությունը, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականների ու օտարերկրացիների

դեմ պայքարը նրանց պայքարի հիմնական գաղափարախոսությունն էր:

Այս աշխատության մեջ իւլամական, հայկական, բյուզանդական և վրացական աղբյուրների հիման վրա անդրադառնալու ենք այս երկու շարժումների հիմնադրման համար պայմանների ստեղծմանը և շուրջ չորս դար շարունակման խնդիրներին: Նաև անդրադառնալու ենք նրանց սկզբունքների նմանություններին ու տարբերություններին, Մազդաքներից ու Մանավիներից կրած ազդեցությանը ու նույնպես ծավալած գործունեությանն ու պայքարին և քննելու այս շարժման ձախողման հիմնական պատճառները:

**Կարագիաննիս Գ. Խրիստոս - Karagiannis G.
Christos - Карагианнис Г. Христос
The Formation of the Old Testament Text**

The problem of tensions and contradictions within the Pentateuchal narrative that gave rise to the notion of multiple sources throughout the nineteenth century also called for an explanation of their combination within the present text. One of those explanations was that of an editor who put together older sources or collections of tradition without making any additions of his own. The choice of whether a certain form of literary activity reflected in the biblical text should be characterized as that of an author or a redactor, and whether or not these terms are even appropriate, has now come to the fore in biblical studies. The hypothetical editor was *not* the only possibility, and not even the most likely one. There was a proliferation of source division which led to a corresponding proliferation in editors. This process of fragmentation was resisted and has been to revert to the earlier trend of multiple redactors. The reading of the biblical text proves that successive scribes updated the texts to accord with changed historical and social circumstances

and with new religious concepts. On the basis of evidence it can reasonably be assumed that editorial reworking of the text of the Old Testament continued unabated for centuries before the texts gradually became unchangeable. Their growing religious authority does not seem to have precluded scribes from changing the form, meaning, and content of the texts. On the contrary, for some scribes the religious authority attributed to the texts was reason to update or otherwise improve their wording in order to make sure that no blemish could be found in them. The empirical or documented evidence indicates that editorial modification was the rule rather than the exception, and accordingly signs of editing can be found in all parts of the text of the Old Testament.

Կյուրեղյան Շուշան - Kyureghyan Shushan - Կյորեգյան Շուշան

Իբն ալ-Զառուզիի «Թալփիս Իբլիս» աշխատության
կառուցվածքի տրամաբանությունը

• ԺԲ դարի հանբալի իրավաբան, պատմագիր, աստվածաբան և քարոզիչ Իբն ալ Զառուզիի «Թալփիս Իբլիս»⁷ (Սատանայի խարդավանքները) աշխատությունը հանբալիական գրականության հիմնարար աշխատություններից է, որն առավելապես անդրադառնում է մուսուլմանական հասարակության տարբեր շերտերի քննադատությանը:

• Աղբյուրագիտական ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքիր են գրքի կառուցվածքի վերլուծությունը և տրամաբանության ընկալումը:

⁷Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել է «Սատանայի խարդավանքները» գրքի հետևյալ իրատարակությունը՝
الحافظ الإمام الدين أبو الفرج عبد الرحمن بن الجوزي البغدادي المتوفي في سنة ٥٩٧هـ، تلبيس
ابليس، دار القلم، بيروت ، لبنان، ١٩٨٢، ص ٣٩٦

• Գրքի 13 բաժիններն ու ենթաբաժիններն անդրադառնում են մուսուլմանական գրեթե բոլոր ավանդական գիտակարգերի, մասնավորապես կրոնահրավական դպրոցների վեճերի և աստվածաբանական ուղղությունների գաղափարական տարրերությունների արդյունքում ձևավորված գիտելիքի քննադատությանը:

• Իբն ալ-Զաուզին գրքի առաջին 4 գլուխներում տալիս է ընդհանրական տեղեկություններ Սուննայի⁸ դրույթների պահպանության, վնասակար նորարարության մերժելիության, սատանայի հնարքներից ու խարեւություններից զգուշանալու վերաբերյալ:

• «Թալբիս Իբլիս»-ի 5-13-րդ գլուխներում հեղինակը անդրադառնում է գիտնականների, կառավարիչների, հասարակ մարդկանց, կրոնահրավական տարբեր ուղղությունների ներկայացուցիչների՝ խարիզմիների, բատինիների, մութազիլիների, կարմատների, իսմայիլիների և այլ անձանց նկատմամբ սատանայի խարդավանքների ուսումնասիրությանը:

• «Թալբիս Իբլիս» աշխատության 10-րդ գլուխը, որը ծավալային առումով գրքի շուրջ կեսն է, նվիրված է սուֆիների և նրանց գործողությունների դատապարտմանը:

• Գրքի բովանդակային մեծ շեշտադրումը սուֆիզմի վրա պայմանավորված է այն հանգամանքով, որ ԺԲ դարում սուֆիզմը դարձել էր սուննիականության հիմնական «մրցակիցը»:

• Իբն ալ-Զաուզին կտրուկ քննադատում է սուֆի հեղինակավոր գիտնականների, անգամ շափակոր սուֆիների դիրքորո-

⁸ Սուննան (թարգմ.՝ միջոց, ճանապարհ, օրինակ, սովորույթ) ներկայացնում է Մուհամմադ մարգարեի կյանքը, որպես իսլամական համայնքի ներկայացուցիչների համար օրինակ: Այն բաղկացած է մարգարեի գործողությունները (fi'l), խոսքերը (qawl) և իր գինակիցների արարքներին ու խոսքերին ցուցաբերած անխոս համաձայնությունը (taqrir) ներկայացնող պատմություններից՝ հաղիսներից: Տե՛ս Ислам, Энциклопедический словарь, Ред. Л. В. Негря, «Наука», Главная редакция восточной литературы, Москва, 1991, стр. 214.

շումները, մեղադրում նրանց ավանդական գիտակարգերից անտեղյակ լինելու մեջ, համարում նրանց սովորությներն ու ծեսերը հերետիկոսական նորարարություն:

• Իբն ալ Զաուզին «Թալքիս Իբլիս» աշխատության մեջ հանդես է գալիս մաքուր իսլամի պահպանության, խալիֆայական իշխանության վերականգնման և սուննիական վերածննդի աջակցության դիրքերից:

Կոստիկյան Քրիստինե - Kostikyan Kristine - Կոստիկյան Քրիստինե

Ֆազլի Բեկ Խսֆահանի տարեգրությունը որպես հայ ժողովրդի
ԺԶ - ԺԷ դարերի պատմության աղբյուր

Ֆազլի Բեկ Խսֆահանի «Աֆզալ ալ-Թավարիխ» երկը Սեֆյան պետության պատմական աղբյուրներից է՝ գրված շահ Աբբաս Ա-ի իշխանության շրջանում: Այդ երկի սկզբնաղբյուրի արժեք ունեցող մասի՝ շահ Աբբաս Ա-ի գահակալման շրջանը ընդգրկող երրորդ հատորի պարսկերեն բնագիրը հրատարակվեց 2015 թ. Մեծ Բրիտանիայում: Աշխատության հեղինակը, շուրջ 7 տարի պաշտոնավարած լինելով Սեֆյան պետության մեջ մտնող Գանձակ-Ղարաբաղի բեկլարբեկության վարչական ապարատում, լավատեղյակ էր այդ շրջանում զարգացող քաղաքական անցուղարձին, տնտեսական կյանքի իրողություններին և դրա շնորհիվ, ի տարբերություն այդ շրջանի մյուս սկզբնաղբյուրների, ավելի հարուստ տեղեկություններ է հաղորդում այնտեղի հայությանն ու հայ մելիքներին վերաբերող որոշ հարցերի մասին:

Ֆազլի Խսֆահանի վկայությունները հաստատում են հայկական աղբյուրների հաղորդումները շահ Աբբաս Ա-ի Կովկասյան արշավանքի ընթացքում պարսից զորքերին հայ մելիքների ցուցաբերած ռազմական աջակցության, ինչպես նաև պարենով ապահովելու վերաբերյալ: Նրա տեղեկությունները լրաց-

նում են այդ շրջանի պատմությունը Գեղարքունիքի Մելիք Շահսագարի ու նրա որդի Մելիք Յավրիի վերաբերյալ նոր մանրամասներով, որոնք վերաբերում են ոչ միայն վերջիններիս գործուն մասնակցությանը 1603-1608 թթ. Հարավային Կովկասում շահ Աբբաս Ա-ի ռազմական ձեռնարկումներին, այլև այդ մելիքների դիրքին ու բնութագրին:

1603-1604 թթ. շահ Աբբաս Ա-ի արշավանքի ժամանակ, պարսկական գորքին են միանում Արցախի (կամ ինչպես հեղինակն է անվանում «Հայկական Առանի») Մելիք Հայկազն ու Օղլան քեշիշը (քահանան) 500 քրիստոնյա հրացանակիրներով: Հետագայում Մելիք Հայկազը իր ծառայությունների դիմաց կրկին ստանում է մելիքական իրավունքներ, իսկ Օղլան քեշիշին՝ որպես թիուլային կալվածք, շնորհվում է Զրաբերդի շրջանի Հաթերք (Հասանրիզ) գյուղը: Պարսից գորքին ծառայություններ են մատուցում նաև Գետաշենի (կամ ինչպես հեղինակն է մատնանշում Չայքենդի) Մելիք Յաղգարը և Շամիսորի մելիքները:

Ինչպես Խոքանդար Մունշին, Ֆազլի Խսֆահանին ևս բավականին մանրամասն նկարագրում է շահ Աբբասի՝ 1604 թ. ձեռնարկած հայության բոնագաղթը, որն ուղեկցվում է Հին Չուղայի և Արևելյան Հայաստանի մյուս բնակավայրերի ու շրջանների ավերմամբ ու միտումնավոր ոչնչացմամբ: Հայության բոնագաղթի թեմային Ֆազլի Խսֆահանին ևս մեկ անգամ անդրադառնում է 1615 թ. իրադարձությունների շարադրանքում՝ նշելով, որ Նախիջևան քաղաքը ավերվում է, իսկ նրա բնակչությունը գաղթեցվում Ֆարրահաբադ:

Ֆազլի Խսֆահանիի հաղորդումները փաստում են, որ չնայած շահ Աբբասի կողմից իրականացված ահարկու բոնագաղթին, այնուամենայնիվ որոշ հայկական բնակավայրեր ու շրջաններ ազատվում են Իրան արտագաղթելու պարտադրանքից: Դրանք հիմնականում շահ Աբբասին իր ռազմարշավի ընթացքում լայն աջակցություն ցուցաբերած հայ մելիքներին պատկանող գյուղերն են, որոնք ինչպես իրանցի պատմագիրն է մատնանշում, հետագայում ևս կարևոր դեր են խաղում շահի

1605/6 թ. ուղմական ձեռնարկումները պարենով ապահովելու, ինչպես նաև Ղարաբաղում կազմակերպվող որտորդությունների ժամանակ որսի թոշուններ մատակարարելու գործում: Իրանցի պատմագիրը հավաստում է, որ որսի թոշունների բուծումն ու բազմացումը հայոց արևելյան նահանգների հայկական մի շարք բնակավայրերի մասնագիտացումն էր:

Ֆազլի Խսֆահանիի «Պատմությունը» հետաքրքիր մանրամասներ է բովանդակում նաև Նոր Չուղայի հիմնադրման, նրա քալանթարների ու դարուղաների մասին, որոնք հարստացնում են Սպահանի հայկական համայնքի պատմությունը նոր տվյալներով:

Հակոբյան Նյուրա - Hakobyan Nyura - Ակոպյան Հյորա Քուստ-ի Կապկոն Վարչական միավորը և Դվինը (ըստ հնագիտական հետազոտությունների)

Արամ Տեր-Ղևոնդյանն առանձնահատուկ վերաբերմունք ուներ Դվինի նկատմամբ: Նա սիրով մասնակցել է Դվինի հնագիտական արշավախմբի աշխատանքներին՝ 1955, 1965 թթ., իր ներկայությամբ յուրահատուկ շուրջ հաղորդելով դրանց: 1958 թ. Լենինգրադում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն "Двинский эмират в Армении 9-11 вв" թեմայով:

ա) Հրատարակելով «Քուստ-ի Կապկոն Վարչական միավորի վերապրուկները խալիֆայության ժամանակ» (Տեղեկագիր, Հաս. գիտ., 1958, 9. էջ 73-77) հոդվածը, մեկ անգամ ևս ցուցում է, թե Ատրպատականի Սաջան ամիրաները՝ նշանակված Աբբասյան խալիֆաների կողմից (թ դարի վերջ - Ժ դարի սկիզբ), ինչպիսի նկրտումներ և հավակնություններ են ունեցել Հայաստանի, Վիրքի և Աղվանքի հանդեպ, որոնք միավորված եին «Արմինիա» կուսակալության կազմում:

բ) Սակայն վարչական այդ միավորն ուներ ավելի հին արմատներ, ընդհուպ մինչև Սասանյաններ: Խոսրով Ա Անուշիրվանը (531-578 թթ.) կատարեց ռազմավարչական բարեփոխումներ: Սասանյան ընդարձակածավալ տերությունը բաժանեց չորս վարչական միավորների: Ատրպատականը, Հայաստանը, Վիրքն ու Աղվանքը մտնում էին Հյուսիսային ռազմական շրջանի մեջ: Հյուսիսային ռազմավարչական միավորը հայկական Աշխարհացույցը (Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ) կոչում է Քուստի Կապկոհ. «Քուստի Կապկոհ, որ է կողմն Կաւակասու լերանց, յորում են աշխարհ երեքտասան Ատրպատական, Արմն (որ է) Հայք, Վարչան, որ է Վիրք, Ռան որ է Աղուանք, Բալասական, Սիսական ...»:

գ) Խոսրով Անուշիրվանը ոչ միայն ռազմավարչատնտեսական բարեփոխումներ ձեռնարկեց, այլև սկսեց իրականացնել ընդգծված կրոնական քաղաքականություն՝ զրադաշտականության պարտադրանք գրավյալ երկրների ժողովուրդներին: Ասածի խոսուն վկայությունն է Սասանյան կրակի տաճարի հիմնարկումը Դվինում. «Իսկ մոզուցն Գունդք ստիպով բռնադատ էին տանել զկրակս ի տաճար սրբութեանց Տեառն, և այլ յականաւոր և ի գեղեցիկ տեղիս շինել ատրուշանս»:

Եղարի վերջերին Դվինը Հայաստանի վարչական և հոգևոր կենտրոնն էր: Վաղարշապատից Դվին էր տեղափոխվել Հայոց Հայրապետական Աթոռը: Դվինում էին նստում Հայոց մարզպանը և Հայրապետը: Հայաստանի քաղաքական հաջողությունների շնորհիվ բարձրացել էր երկրի և Հայոց եկեղեցու հեղինակությունը:

դ) Սակայն երկրի համեմատական խաղաղ վիճակը Զ դարի կեսերին կտրուկ փոխվում է, երբ 564 թ. Պարսից Խոսրով Ա արքան Հայաստանի մարզպան է նշանակում Սուրեն Ճիհովը Վշնասապին: Տիգրոնը նորանշանակ մարզպանին օժտել էր կառավարման բարձր իշխանությամբ: Լինելով դաժան, չարաբար և անբար հայատյաց մարդ՝ նա առաջին օրվանից իսկ ձեռնարկեց Հայաստանը տնտեսապես տկարացնելու, բռնի հավատափոխու-

թյամբ Պարսկաստանին վերջնականապես ենթարկելու գործընթաց: Խոսրովը հրամայեց ատրուշաններ կառուցել ողջ Պարսկաստանում, «ամենից առաջ Դվինում»:

Հովհան Եփեսացին (Զ դ.) վկայում է, որ «նա (Սուրեն մարզպանը) բռնի (ատրուշանի) տեղը նշանակեց, և սկսեցին հիմքը փորել և պատեր կառուցել: Հայերը մեկ մարդու նման հավաքվեցին և գնացին մարզպանի մոտ, ասացին, որ իրենք քրիստոնյաններ են և թույլ չեն տա իրենց երկրում կառուցել հեթանոսական տաճար: Սակայն մարզպանը իրականացրեց իր մտադրությունը և Դվինում կառուցեց Սասանյան կրակի տաճար «տուն մոգաց», որը պատճառ դարձավ ապստամբական մի նոր հուժկու ալիքի: Ապստամբությունը դեկավարում էին Հովհաննես Գաբեղենացի կաթողիկոսն ու Վարդան Մամիկոնյանը (Կարմիր Վարդանը): Ապստամբներին հաջողվեց (ըստ Եփեսացու) ոչ միայն քշել պարսիկներին, այլև սպանել Սուրեն մարզպանին ու մոգերին 572 թ. փետրվարի 2-ին: Լսելով, որ Ատրպատականից զորք է շարժվում դեպի Դվին, կաթողիկոսն ու Վարդան Մամիկոնյանը հեռանում են Կ. Պոլիս, ուր նրանց մեծագույն հարգանքով ընդունում է բյուզանդական կայսրը:

Ե) 1970-ական թվականներին Դվինի հնագիտական արշավախումբը ձեռնարկեց պեղումներ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային թևում: Պեղումների միջոցին բացվեց հայ աշխարհիկ ճարտարապետության եզակի շինություններից մեկը՝ Ե - Զ դդ. պալատական հուշարձանախումբը՝ սյունազարդ սրահով և համապատասխան հարկաբաժիններով, որն ամենայն հավանականությամբ ծառայել էր իբրև Աթոռանիստ Հայոց Հայրապետների համար: Պեղումները բացահայտեցին, որ պալատը կանգուն է եղել շուրջ մեկ հարյուրամյակ և հրդեհի է մատնվել 572 թ. ապստամբության հետևանքով: Պալատի սյունազարդ դահլիճին արևմուտքից կից բացվեց մի շինություն, որն օրգանապես կապվում է պալատի հատակագծային ամբողջության հետ: Շինության կենտրոնում բացվեց քարակերտ հարթակ՝ կողքին ուղղահայց դիրքով դրված մոխրով լի խոշոր մի կավանոք:

Հարթակը կենտրոնում ուներ քառակուսի գոգավորություն քառակող սյան համար, որի վրա դրվում էր հատուկ անոթ՝ մշտապես վարվող սրբազն կրակով:

Նյութերի և ճարտարապետական մանրամասների քննությունը հավաստում է, որ նորահայտ շինությունը եղել է զրադաշտական մեհյան (կրակի տուն, իսկ հարթակը՝ ատրուշան կամ ատուրաշան): Պալատական շինությունը «կրակի տան» հետ ավերակվելուց և հրդեհվելուց հետո այլևս չի վերականգնվել որպես պղծված շինություն:

զ) Նյուսիսային ուազմավարչական այս միավորը՝ Քուստ-ի Կապկոհը, յուրատեսակ պատվար էր ընդդեմ արտաքին թշնամիների, առավելապես խազարների:

Արաբական խալիֆայությունը, որը Սասանյաններից շատ բան ժառանգեց, անփոփոխ թողեց և այդ վարչական բաժանարար միավորը: Արաբական տիրապետության ժամանակ Հայատանը, Վիրքը և Աղվանքը միացվեցին մի ոստիկանության մեջ՝ «Արմինիա» անվանումով՝ կենտրոն ունենալով Դվինը:

Պատմապեյուրագիտական տվյալներն ու հնագիտական պեղումները վկայում են, որ Դվինը արաբական արշավանքների ժամանակ ենթարկվել է մեծ ավերածությունների, տվել մարդկային մեծաքանակ զոհեր, մասամբ ամայացել: Այդ ավերածությունների կապակցությամբ տեղին է հիշատակել Աբղ-Ազիզի հայտնի խոսքերը. «Դվինի առաջին ավերածության ժամանակ իմ ձեռով կատարվեց քաղաքի կործանումը, և ահա ես վերականգնեցի այն: Վերստին շինեցի Դվին քաղաքը մեծությամբ առավել հզոր և ընդարձականիստ, քան եղել էր նախկինում, ամրացրի դոներով և դոնափակերով պարսպի շուրջը ջրով լցված խրամատ անցկացրի քաղաքի ապահովության համար»: Վերոհիշյալը վավերացնող հնագիտական հայտնագործություններ ունենք գտնված քաղաքի տարածքի տարբեր հատվածներում. խեցեղեն, ապակե նկարազարդ սպասք՝ արաբերեն արձանագրություններով, առևտրական լայն գործունեություն վկայող կնքադրոշներ՝ արձանագրությունները մասամբ ընթեռնելի, աղյուսառու

շինությունների ավերակներ՝ բնորոշ արաբական շինարվեստին և այլ նյութեղեն գտածոներ:

Հովհաննիսյան Անուշ - Hovhannisyan Anush – Օվանիսյան Անուշ

Օսմանիզմ թե՝ թյուրքիզմ. հայեցակարգերի պայքարը «Tarih-i Osmani Encümeni Mecmuası» պարբերականի էջերում

Թուրքական, արևմտյան, ինչպես նաև ոռւս արևելագետների շրջանում տարածված է այն տեսակետը, թե Աթաթյուրքի նախաձեռնությամբ ստեղծված թուրքական պատմագիտական ընկերությունը, որը ստանձնել էր պատմությունն ուսումնասիրելու և այն նոր տարբերակով ներկայացնելու պարտականությունը, իրապես հանդես եկավ «նոր պատմական հայեցակարգով»: Պատմության դասավանդումը Մուսթաֆա Քեմալը նոր ազգային ինքնության կառուցակազմման կարևոր գրավականներից մեկն էր համարում, ուստի այդ «նոր» հայեցակարգի հիմնադրույթները շարադրվեցին նրա հեղինակած «Թուրքական պատմության հիմնական ուղղությունները» ("Türk tarihinin ana hatları") ուղեցույցային ձեռնարկի էջերում: Իրականում դեռևս երիտրուրքերի իշխանության օրոք քննարկման առարկա էին դարձել այն զաղափարները, որոնք ձևափոխվելով կյանքի կոչվեցին քեմալական շրջանում:

Այս առումով հատուկ ուշադրության է արժանի 1909 թ. ստեղծված «Օսմանյան պատմական ընկերության» (Tarih-i Osmani Encümeni) գործունեությունը, որն իր արտացոլումն է գտել «Ընկերության» իրատարակած "Tarih-i Osmani Encümeni Mecmuası" պարբերականի էջերում:

«Ընկերության» կանոնադրության մեջ նշվում էր, որ այն հիմնադրվել էր սուլթան Մեհմեդ Ռեշադի իրամանագրով (irade) և նյութական աջակցությամբ որպես պատմագիտական հանձնաժողով, որի առաքելությունն էր կրթօջախների համար Օս-

մանյան կայսրության պատմության նոր և համապարփակ դասագիրք պատրաստելը: Այդպիսի պատմության ստեղծման հիմնական նպատակներից էին հայտարարվում պետության բոլոր «էլեմենտների»՝ (unsurlar - խոսքը կայսրության տարածքում բնակվող տարբեր ժողովուրդների մասին է) մեկը մյուսին ճանաչելը, իրար նկատմամբ անվստահության և ատելության (nefret) հաղթահարումը, «զիտելիքների հորիզոնի ընդլայնումը»: «Ընկերության» ստեղծման մասին հոչակագրում նշվում էր նաև, որ միմյանց և ընդհանուր պատմությանը հաղորդակից լինելով՝ կայսրության տարբեր ժողովուրդները կզիտակցեն մի պետության մեջ միահամուռ ուժերով գոյատևելու անհրաժեշտությունը և սեր կտածեն ընդհանուր օսմանյան հայրենիքի (vatan-i müstereke) հանդեպ: Սա, անշուշտ, այն ժամանակվա պաշտոնական գաղափարախոսության՝ օսմանիզմի դրսետրումն էր, գաղափարախոսություն, որով իշխանությունները փորձում էին փրկել ազգային-ազատագրական շարժումներից մասնատվող օսմանյան բոնապետությունը:

Կազմակերպության նախագահ, օսմանյան վերջին տարեգիր (վաքախնուվիս) Աբդուրրահման Շերեֆի համոզմամբ, Օսմանյան կայսրության համապարփակ պատմություն գրելու համար անհրաժեշտ էր օգտագործել ոչ միայն թուրքական աղբյուրներ, այլ նաև բյուզանդական և հայկական, քանի որ իր մտահղացմամբ շարադրանքը պետք էր սկսել այն ժամանակաշրջանից, երբ թյուրքերը Անատոլիայում հիմնում են առաջին պետությունը (սելջուկներ) և, բնականաբար, առնչվում են «այլ ժողովուրդների պետական միավորումների հետ»: «Ընկերության» աշխատանքների մեջ ներգրավվեցին նաև ոչ թուրք մասնագետներ՝ Խորհրդարանի պալատի անդամ սերբ Իսկանդեր Յանկո Հուջին, մեջլիսի պատգամավոր հույն Կառոլիդին, Մուտավիլիս Քրիստովուլուսը, հայ լրագրող, «Սաբահ» թերթի խմբագիր Տիրան Քելեքյանը :

«Մեջմուա»-ի ամբողջական տեսությունը թույլ է տալիս աներկա արձանագրել, որ ոչ թուրք հեղինակների ներկա-

յությունը պարբերականի էջերում զգալիորեն զիջում էր նրանց թուրք համագործակիցների հրապարակումներին: Նշված փաստը բացահայտում է օսմանիզմի իրական էության, որը թեև հայտարարում էր, որ բոլոր ժողովուրդները կայսրությունում համահավասար են, սակայն իրականում թուրքերն «ամենահավասարն» եին: Անհրաժեշտ է ընդգծել, որ «Encümen»-ի «Օսմանյան պատմության» նախագիծը, իր բոլոր թերություններով հանդերձ, առաջին և վերջին փորձն էր Թուրքիայի ողջ պատմության ընթացքում, ներկայացնել այն՝ պետության ոչ թուրք ժողովուրդների մասնագետների մասնակցությամբ:

Այդ նախագիծը այդպես էլ երբեք չիրագործվեց: 1913 թ. մամուլում լայն քննարկման համար հրապարակվելուց հետո, նախագիծը սուր քննադատության արժանացավ «Türk Yurdu» պանթյուրքիստական ամսագրի էջերում: Քննադատական հոդվածի հեղինակը, ամենայն հավանականությամբ, Յուսուֆ Արշուրան էր: Նա գրում է, որ օսմանյան պատմությունը պետք է ներկայացված լինի որպես ընդիհանուր թյուրքական պատմության (Türk ırkı tarihi) մի մասը միայն, որ մոռացված է ժողովրդի արարողական դերը պատմության մեջ, որ կատարված չէ համապատասխան սոցիալ-տնտեսական վերլուծություն և, վերջապես, ոչ մի տեղ հիշատակված չէ «Türk» բառը: Հոդվածագիրը առաջարկում էր նաև հանել շարադրանքից այն մասերը, որոնք նվիրված են թյուրքերի՝ Փոքր Ասիա և Եվրոպա ներխուժելուց առաջ այստեղ ապրող և պետություններ ունեցող ժողովուրդների պատմությանը: Սա, իհարկե, հետևանք էր Բալկանյան պատերազմից հետո Թուրքիայում ուժգնացող ազգայնական տրամադրությունների. օսմանիզմի զաղափարախոսությանը փոխարինում էր պանթյուրքիզմը: «Encümen»-ը թեև դադարեցրեց իր գործունեությունը 1928 թ. փաստորեն, նրա իրավահաջորդը դարձավ հանրապետական Թուրքիայում Մուսթաֆա Քեմալի՝ 1931թ. ստեղծած «Թուրք պատմության ուսումնասիրման» (Türk Tarihi Tetkik Cemiyeti), հետագայում «Türk Tarih Kurumu» (Թուրքական պատմագիտական ընկերություն) կազմակերպությունը: Փաստու-

թեն նոր Թուրքիան օսմանյան շրջանից ժառանգեց ոչ միայն արդեն իսկ փոխակերպված այդ կառույցը՝ իր ազգայնական անդամներով (Ահմեդ Ռեֆիկ, Նեջիր Ասըմ, Ֆուադ Քյոփրյուլու և Յուսուֆ Աքչուրա), այլ նաև մոտեցումները, տեսակետները և զաղափարները, որոնք տեղ գտան Աթաթյուրքի առաջ քաշած «նոր պատմական հայեցակարգում»:

Հովհաննիսյան Դավիթ - Hovhannisyan Davit - Օվանիսյան Դավիտ

Հ - Թ դարերի արաբական աշխատությունները որպես
աղապտացիոն գործընթացների ուսումնասիրության աղբյուր

1. Քաղաքակրթական համակարգերին մշակույթների աղապտացման գործընթացների ուսումնասիրությունը չափացնելու և արդիական խնդիր է:

2. Իսլամի վաղ շրջանի գրավոր աղբյուրները հարուստ նյութ են տրամադրում վերը նշված խնդրի հետազոտողների համար:

3. Ը դարի առաջին կեսը չափազանց հետաքրքիր է այն հանգամանքի շնորհիվ, որ այդ ժամանակաշրջանում են ստեղծվում արաբական առաջին գրավոր աղբյուրները, ինչն արդեն աղապտացիոն հզորագույն գործիքի ստեղծման գործընթաց է: Այդ շրջանի աղբյուրները ներկայացնում են մշակույթի համար կարևորագույն նշանակություն ունեցող բանավոր տեքստերի՝ գրեթե առանց մշակման գրավոր տեքստերի վերածման օրինակներ:

4. Ը դարի առաջին տասնամյակների ընթացքում, մի կողմից սկսվում է հաղիսների օրինական և կանոնակարգված գրառում գործընթացը, մյուս կողմից ստեղծվում են աղաբի առաջին ստեղծագործությունները:

5. Ի պատասխան «օտարների» (աջամ)՝ հիմնականում իրանական ծագում ունեցող հեղինակների, մուսուլման գիտնական-

ները (ալիմ) ստեղծում են Ղուրանից և սուննայից բխող աղաքի իրենց տարբերակը:

6. Այս գործընթացների արդյունքում հատկապես Թ դարում ձևավորվում է աղաքի խնդիրներին նվիրված բազմազան և բազմաժանր գրականություն, որը պատասխանների մի քանի տարբերակ է առաջարկում այն հարցին, թե ինչպիսին պետք է լինի կիրթ մարդը քաղաքակիրթ հասարակությունում:

7. Լայն և բարդ ընթացք ունեցող քննարկում է ծավալվում «գիտելիք» հասկացության էության, բովանդակության, ինչպես նաև գիտելիքի այն համալիրի վերաբերյալ, որին պետք է տիրապետի պաշտոն ստանձնելուն հավակնող անձնավորությունը:

Ղազարյան Գևորգ - Kazaryan Gevorg - Կազարյան Գևորգ

Անտիոքի պատրիարքության հայկական թեմերը (Ե - ԻԱ դդ.)

«Աստվածաքաղաք» Անտիոքը, լինելով Քրիստոնեության հնագույն բնօրրաններից մեկն ու Հռոմեական կայսրության «Արևելք» դիոցեզի մայրաքաղաքը, Դ - Ե դդ. դառնում է հայրապետական աթոռ՝ գրավելով Տիեզերական Եկեղեցու հնգապետական համակարգի չորրորդ տեղը (Ավագ և Նոր Հռոմներից, Ալեքսանդրիայից հետո): Անտիոքի պատրիարքությունն այսպիսով դառնում է առաջավոր Ասիայի կարևորագույն եկեղեցական կենտրոնը, որն իր հոգևոր իշխանությունն էր տարածել ընդարձակ տարածքների, այդ թվում նաև պատմական Հայաստանի մի շարք բնակավայրերի վրա:

Այսպես, Մեծ Հայքի հարավ-արևմտյան շրջանները, որոնք 387 թ. անցնում են Արևելահռոմեական կայրարությանը (Բյուզանդիային), աստիճանաբար դրվում են Անտիոքի պատրիարքության իշխանության ներքո: Տարածաշրջանի կարևորագույն աթոռներն են Ամիդի և Մարտիրոսուպոլիսի (Տիգրանակերտի)

մետրոպոլիտություններ, որոնք իրենց գոյությունը պահպանում են նաև արաբական գերիշխանության ժամանակաշրջանում:

Ժ դ. կայսրությունն արաբներից մասամբ ազատում է այս տարածքները, ընդ որում, հետարաբական շրջանում Անտիոքի պատրիարքությանը պատկանող որոշ տարածքներ (օրինակ՝ Արշամաշատը), անցնում են Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքությանը։ Միևնույն ժամանակ, մինչարաբական շրջանում կապադովկյան Կեսարիայի եպիսկոպոսական աթոռ հանդիսացող Կարինը (Թեոդոսուպոլիսը), որը Մեծ Հայքի հնագույն նվիրապետական աթոռներից մեկն էր, անցնում է Անտիոքի պատրիարքությանը։

Մելջուկյան արշավանքների հետևանքով հայության հոծ զանգվածներ են գաղթում ու հաստատվում Կիլիկիայում, որը հնուց անտի Անտիոքի պատրիարքության վիճակն էր։ Կիլիկյան Հայաստանում, այսպիսով, կողք կողքի գոյակցում էին երկու զուգահեռ եկեղեցական նվիրապետություններ՝ Անտիոքի պատրիարքության և Հայոց կաթողիկոսության։

Նոր ժամանակներում Անտիոքի պատրիարքության վիճակ հանդիսացող Արևմտյան Հայաստանի օրթոդոքս գավառներում, մասնավորապես Չմշկածագի շրջանում տարածվում է մահմեդականացման գարծընթացը, ինչը մահացու հարված է հասցնում քրիստոնյա համայնքներին, այնպես որ ԺՈ դ. դրությամբ Կարինի մետրոպոլիտությունն իր ենթակայության տակ ուներ Ակնի և Չմշկածագի շրջանի ընդամենը մի քանի գյուղեր, որտեղ բնակվում էին հայ հոգումները։ Սակավամարդության պատճառով Թեոդոսուպոլսի մետրոպոլիտությունը լուծարվեց 1901 թ., և վերոնշյալ թեմերը հանձնվեցին Ամիդի և Չորրորդ Հայքի մետրոպոլիտությանը։

Մեր օրերում՝ 2014 թ., Անտիոքի պատրիարքությունը էրգրումի տիտղոսակիր առաջնորդ ձեռնադրեց Քայիշ եպս Սադեկին, մինչդեռ Ամիդի մետրոպոլիտությունը շարունակում է թափուր թեմ մնալ։

Ղազարյան Էլինա - Kazarian Elina – Կազարյան Էլինա

Հաֆիզի Աբոուի «Աշխարհագրության» տվյալները Հայաստանի և
հայկական բնակավայրերի մասին

Այլալեզու հեղինակների պատմագրական երկերի ուսումնասիրությունը խիստ կարևոր է Հայաստանի՝ տարբեր ժամանակափուլերի պատմության առանցքային հարցերի համակողմանի քննության համար: Այս տեսանկյունից արժեսորվում են հատկապես պարսկագիր հեղինակների աշխատությունները, որոնք մեծամասամբ նախկինում հատուկ ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել:

Թիմուրյան ժամանակաշրջանի նշանավոր պալատական պատմագիր Հաֆիզի Աբոուի (Աբուլլահ իբն Լութֆուլլահ, մահ. 1430 թ.) «Զողոգրաֆիա» (Աշխարհագրություն) աշխատությունը եզակի սկզբնաղբյուր է տվյալ ժամանակահատվածում Հայաստանի և մասնավորապես հայկական բնակավայրերի պատմական և սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր կողմերի լուսաբանման համար: Պատմա-աշխարհագրական բնույթի ստվարածավալ աշխատության հիմքում արաբերեն մեզ անհայտ աշխարհագրական երկ է, որը Թիմուրյան տերության կառավարիչներից Շահրուխ Միրզայի պատվերով Հաֆիզի Աբոուն նախ թարգմանում է պարսկերեն, այնուհետ համալրում և հարստացնում է այն ինչպես իր՝ տարբեր երկրներ, այդ թվում և Հայաստան կատարած ճանապարհորդությունների ընթացքում ձեռքբերած, այնպես էլ հավաստի այլ սկզբնաղբյուրների տարաբնույթ տվյալներով:

Կարևորելով սկզբնաղբյուրի դերը ԺԴ դարի վերջից ԺԵ դարի առաջին կեսն ընդգրկող ժամանակաշրջանում հայկական որոշ բնակավայրերի և շրջանների պատմության ուսումնասիրության գործում՝ մեր զեկույցի շրջանակում կներկայաց-նենք նշված աշխատության մեջ Հայաստանին առնչվող պատմական, աշխարհագրական և տնտեսական բնույթի արժեքավոր հաղոր-

դումները՝ դրանք քննելով և հա-մեմատելով պատմագրական այլ երկերի վկայություններով:

Մաթևոսյան Արթուր - Matevosyan Artur - Մատևօսյան Արթուր

Ա. Երրորդության դավանանքը Ա. Գրիգոր Տաթևացու
«Ոսկեփորիկ»-ում

Սբ. Երրորդության դավանանքը, լինելով քրիստոնեական վարդապետության առանցքը, միշտ գտնվում էր քրիստոնյա աստվածաբանների ուշադրության կենտրոնում: Սբ. Գրիգոր Տաթևացին, լինելով Հայոց Եկեղեցու խոշորագույն աստվածաբաններից մեկը, բացառություն չէր կազմում: Նրա «Ոսկեփորիկ»-ում կա Երրորդաբանական դավանանքի հստակ բանաձև, որը նաև հայ աստվածաբանական մտքի հազարամյա զարգացման ամփոփումն է: Ըստ Տաթևացու Սբ. Երրորդությունը երեք անձնավորություն է և մի բնություն, ու հետևաբար մի Աստված: Հայրն անձին է և անսկիզբ, Որդին ծնված է Հոր բնությունից նախքան հավիտենությունը, իսկ Սբ. Հոգին բխած է Հորից անխմանալի եղանակով: Սբ. Երրորդությունն ունի մի եռություն, մի իշխանություն, մի կամք և մի արարչագործ զորություն: Սբ. Երրորդության անձնավորությունները համագոն են, ունեն մի կարգ, մի պաշտոն և մի երկրպագություն: Որդին ու Սբ. Հոգին նույնքան Աստված են, որքան Հայրը: Թեև Հայրը Որդու և Սբ. Հոգու կեցության պատճառն է, Որդու ծնունդը ու Սբ. Հոգու բխումը ոչ մի դեպքում չի կարելի համարել Հոր կամային ակտի հետևանք: Դա հավերժական և անձառելի ծնունդ ու բխում է, որն անհրաժեշտաբար կատարվում է աստվածային բնության անդրանցական խորքերում: Միաձին Որդին Հորից ծնվում է հավիտենականության մեջ, և ունի Հոր բոլոր հատկությունները բացի չծնված լինելուց: Նույն հավիտենականության մեջ բխում է Հորից և Սբ. Հոգին: Դա չի նշանակում, որ Սբ. Երրորդության Դեմքերի միջև կա ժամանա-

կային հաջորդականություն: Նրանք համարուն են ու համապատիվ, ունեն նույն բնությունը, զորությունը և կամքը: Դեմքերը երեքն են, բայց Աստված մի է: Սբ. Երրորդության այս ըմբռնումը նաև Հայոց Եկեղեցու ըմբռնումն է: Դրանում համոզվելու համար կարելի է համեմատել Տաթևացու երրորդաբանական վարդապետությունը հայ աստվածաբանական մտքի առաջին խոշոր հուշարձան «Հաճախապատում» ճառերի հետ, որտեղ, ըստ Էռյան, պարունակվում է նույն վարդապետությունը: Դրա հիմքում ընկած է Նիկիո հավատո հանգանակը, որի համաձայն Սբ. Երրորդության դեմքերը ոչ թե սոսկ աստվածային գործունեության դրսևորումներ են, այլ՝ ինքնակա և ինքնուրույն Անձինք, որոնք համագոն են և համազոր, ու կազմում են մի և միակ Աստվածություն:

Միրզաբեկյան Գեորգի - Mirzabekyan Georgi - Мирзабекян Георгий

Կարբիի նահիեն (գյուղախումբ) 1728 թ. օսմանյան ընդարձակ
հարկացուցակում

Օսմանյան կայսրությունը, 1720-ական թվականներին նախաձեռնելով Այսրկովկասի գրավումը, կարողացավ իր տիրապետությունը հաստատել միայն դրա արևելյան սահմաններում: Գրավյալ տարածքներում օսմանյան իշխանությունները ձեռնամուխ եղան ընդարձակ հարկացուցակների՝ աշխարհագիր մատյանների գրանցմանը: Մարդահամար իրականացվեց նաև Արևելյան Հայաստանում, որի աշխատանքներն ավարտվեցին 1728 թ.:

Հարկացուցակներ կազմվեցին նաև Կարբիում, որն այդ ժամանակահատվածում բաղկացած լինելով համանուն քաղաքից և բազմաթիվ գյուղերից՝ ուներ նահիեի (գյուղախումբ) կարգավիճակ և պատկանում էր Երևանի լիվային (գավառին):

Վերոնշյալ թեմայի ընտրությունը պայմանավորված է գլխավորապես երեք գործոնով:

Առաջինը՝ Կարբին, Երևանի լիվայի այլ նահիեների համեմատությամբ, ունեցել է քանակապես ամենաշատ գյուղերը, որտեղ ի թիվս այլ հարցերի, կարևոր է ընդհանուր ժողովրդական պատկերի ուսումնասիրությունը:

Բացի այդ, մեծ է Կարբիին պատկանող Վաղարշապատ գյուղի (օսմաներենում՝ Ուչքիլիսէ) ուսումնասիրության արժեքը, որը պայմանավորված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դերով: Անշուշտ, այն մեծ ազդեցություն է թողել գյուղի վրա և պատահական չէ, որ բնակավայրը 1728 թ. Երևանի լիվայում աշրի է ընկել ամենամեծ սոցիալ-տնտեսական ներուժով:

Օսմանյան ընդարձակ հարկամատյանից զատ, գոյություն ունեն Վաղարշապատ գյուղին պատկանող թվով 4 առանձին քաղվածքներ, որոնք պահպում են Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում: Հարկ է նշել, որ դրանցից երկուսը վերաբերում են 1728 թ., ուստի ուշագրավ է վերջինների և բուն ընդարձակ հարկամատյանի տվյալների համադրությունը:

Միքայելյան Տիգրան - Mikayelyan Tigran - Միկաելյան Տիգրան

Դվինի պեղումներից գտնված արաբատառ
արձանագրությունները

Ինչպես հայնտի է, Դվինը եղել է Արաբական խալիֆայության Արմինիա նահանգի կենտրոնը, այստեղ Ը դարից բնակություն է հաստատել արաբ և մուսուլման բնակչություն: Թղարից քաղաքը, որոշ ընդհատումներով, Շաղդաղյան ամիրաների տիրապետության տակ էր՝ մինչև մոնղոլների կողմից նրա կործանումը (1236 թ.):

Դվինի պեղումներից գտնվել են արաբատառ արձանագրություններով ապակու, խեցեղենի բեկորներ, բրոնզե թասեր:

Զեկուցման նպատակն է դիտարկել մինչ մեզ արդեն իսկ ընթերցված, ինչպես նաև մեր կողմից վերծանված մի քանի արաբատառ արձանագրություններ:

Մերտցյան Տաթևիկ - Mkrtchyan Tatevik - Մկրտչյան Տաթևիկ

«Նահց ալ-Բալաղան» որպես Ժարի շիա իսլամի
(մահմեդականության) կրոնագաղափարական հիմքերի
ուսումնասիրության աղբյուր

Nahg al-balagha (այսուհետև՝ «Նահց ալ-Բալաղա»)⁹ (արաբերենից nahg (نَاهْجَ) թարգմանաբար նշանակում է՝ 1. ուղի, ճանապարհ, 2. մեթոդ, միջոց, 3. արվեստ, իսկ balagha (بَالَّغَة)՝ 1. հոետորություն, ճարտասանություն¹⁰ ուղղահավատ չորրորդ խալիֆ և շիա առաջին իմամ Ալի իբն Աբի Տալիբի (մահ. 661 թ.) խուտբաների՝ (241 քարոզ, ճառ, հրահանգներ), ուղերձ-նամակների (79) և ասույթների (480) մի ընտրանի է:

Ալի իբն Աբի Տալիբին պատկանող նյութը բանավոր երկարատև փուլ է անցել. ժողովրդական բանահյուսության մեջ բանավոր խոսքից գրավոր անցման փուլում այն հատվածաբար գրի է

⁹ Մեր ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք Նահց ալ-Բալաղայի հետևյալ հրատարակությունից (այսուհետ՝ Նահց ալ-Բալաղա) نهج البلاغة من كلام أمير المؤمنين أبي الحسن علي بن أبي طالب عليه السلام و هو ما اختاره الشري夫 الرضي. قم: أنصاريان، 2004، ص .653.

¹⁰ Բացի ba-lu-ǵa (արաբերեն՝ ճարտասան լինել) բայից կազմված ճարտասանություն, հոետորություն իմաստից՝ կա նաև նաև ba-la-ǵa (արաբերեն՝ հասնել) բայի արմատից կազմված մեկ այլ՝ անվանական իմաստով նշանակություն. այն է՝ ցանկության իրագործում կամ հասնելը վերջին/նպատակին (խոսքի ճարտասանության միջոցով):

առնվել բազմաթիվ միջնադարյան հեղինակների կողմից¹¹, և արդեն ժ դարի՝ միջնադարյան հայտնի գրականագետ, բաղդադյան միջավայրի հայտնի բանաստեղծ և շիա գրող ալ-Շարիֆ ալ-Ռադին (970-1015/16), ճարտասանությունը՝ որպես հավաքագրման հիմք համարելով, այն զետեղել է մեկ աշխատության մեջ:

Հայտնի է, որ հին արաբական հասարակական գործունեությանը հատուկ էր կոլեկտիվ հիշողության մեջ նախորդ սերունդներից ժառանգած նախնիների իմաստության և փորձի մասին հստակ ու մանրակրկիտ ինֆորմացիայի պահպանումը և փոխանցումը, որն էլ հիմնվում էր բանավոր փոխանցման համակարգի վրա՝ հիմքում կրելով երկար տարիների ընթացքում մշակված ընտրության, պահպանման և տվյալ ինֆորմացիայի աղավաղման հնարավորությունների բացառումը տվյալ համակարգի ներսում¹²:

Պատահական չէ, որ Ալի իբն Աբի Տալիբին պատկանող ժառանգությունն իր գրավոր ձևակերպումը մեկ ամբողջական աշխատության մեջ ստանում է շիա խլամի գաղափարախոսության ջատագովների ընտանիքից ալ-Շարիֆ ալ-Ռադիի կողմից և Բուիների (945-1055 թթ.) գերիշխանության փուլում, որը գիտական գրականության մեջ հայտնի է որպես «շիա խլամի

¹¹ Նահջ ալ-Բալաղայի ավելի վաղ աղբյուրներում «բովանդակության» ճշգրտումը, դրանց առկայությունը մուսուլմանական միջնադարյան պատմագիրների և կենսագիրների աշխատություններում առանձին ուսումնասիրության թեմա է, ինչը ժամանակակից որոշ գիտնականներ փորձել են իրականացնել հոդվածների և ատենախոսությունների տեսքով՝ հենվելով միջնադարյան և ավելի ուշ շրջանի հեղինակների՝ Նահջ ալ-Բալաղայի մեկնության և աղբյուրագիտական աշխատանքների վրա: Մանրամասների համար տես՝ A Critical Study of Nahj Al-Balāgha, Syed Mohammad Waris Hassan, PhD thesis, Edinburgh University, 1979, pp. 100-149, Mohammad Ghasemi Zavieh, Authenticity of Nahj al-Balāgha, MA Thesis, Institute of Islamic Studies, McGill University, Montreal, 1994:

¹² Այս մասին մանրամասն տես՝ Оганесян Դ., К вопросу об истинности и «правдоподобности» поэтического высказывания, стр. 209-210:

դարաշրջան» և/կամ «իսլամական վերածննդի»¹³ նաև «իրանական ինտերմեցոյի»¹⁴ դարաշրջան, որն էլ շիա իսլամի գաղափարախոսական աշխատություններ ստեղծելու, իրենց նախնիների ժառանգությունը գրավոր դարձնելու և հետագա սերունդներին թողնելու ամենանպաստավոր ժամանակաշրջանն է համարվում:

Տվյալ շրջափուլը կարևոր էր ոչ միայն քաղաքական, տնտեսական, հասարակական այլև կրոնադավանաբանական իրադարձությունների համատեքստում: Այս ժամանակահատվածի առանձնահատկությունների թվում նշվում է մշակույթի զարգացմանը նպաստող հանդուրժողականությունը ոչ միայն շիա իսլամի (մահմեդականության), այլև բոլոր կրոնական, գաղափարական ուղղությունների և հոսանքների համատեքստում¹⁵:

«Նահջ ալ-բալաղան» արժեքավոր է ոչ միայն պատմաքաղաքական, մշակութային, հասարակական իրադարձությունների, այլև շիա իսլամի (մահմեդականության) աստվածաբանական, կրոնափիլիսոփիայական հասկացությունների գաղափարական ուղղությունների համատեքստում:

Իմամ Ալիի դերն անհերքելի է շիա համայնքի և հետա-

¹³ Իսլամական (մահմեդականության) վերածննդի մասին տես՝ Joel L. Kraemer, Humanism in the Renaissance of Islam: The Cultural Revival During the Buyid Age, Brill, 1992:

¹⁴ “Iranian Intermezzo” տերմինը գիտական շրջանակներում օգտագործվում է 821- 1055թթ. ընկած ժամանակահատվածի համար, երբ իրանական մի քանի դինաստիաներ, Աբբասյան խալիֆայության գերակայությունն ընդունելով հանդերձ, ունեին անկախ գործելու որոշակի հնարավորություններ: Այս մասին տես՝ Minorsky V., “The Iranian Intermezzo,” in Studies in Caucasian History, pp. 110 – 16:

¹⁵ Բուիների շրջանի մասին՝ Claude Cahen and Charles Pallet, “Buwayhids or Buyids”, Encycloaedia of Islam 2. Vol 1, pp 1350-1357, Roy Mottahedeh, Loyalty and Leadership in an early Islamic society, I.B.Tauris, 2001, Joel L Kraemer, Humanism in the Renaissance of Islam: The Cultural Revival During the Buyid Age, Brill Paperbacks, 1992, John J. Donohue, The Buwayhid Dynasty in Iraq 334H./945 to 403H./1012, Shaping Institutions for the Future, Brill, 2003:

զայում նաև շիա իսլամի (մահմեդականության) կրոնաքաղաքական, դավանաբանական գաղափարախոսության ձևավորման գործում:

Ալ-Շարիֆ ալ-Ռադիի կենսագործունեության շրջանում շիա իսլամի իսնաաշարիական-իմամիական ուղղության ձևավորման առանձնահատկությունների և տվյալ ժամանակաշրջանի մարտահրավերների վերհանումը կարևոր է ներկայացնել սուննիական կրոնաիրավական դպրոցների՝ մազհաբների ձևավորմանը զուգընթաց:

Զեկույցում ներկայացվում է «Նահջ ալ-բալաղայի» կրոնագաղափարական նշանակությունը և ազդեցությունը Ժ - ԺԱ դարերի շիա իսլամի (մահմեդականության) կրոնադավանաբանական ուսմունքի համատեքստում:

Մկրտումյան Գայանե - Mkrtumyan Gayane - Մկրտումյան Գայնե

Մատենադարանի արաբատառ ֆոնդի № 358 ձեռագիր-պայմանագիրը հայ-մահմեդական հարաբերությունների
համատեքստում

Հայ-արաբական հարաբերությունների համատեքստում մեծ կարևորություն են ձեռք բերել Մուհամմադ մարզարեի անունով Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում պահվող արաբերեն, պարսկերեն մի շարք վավերագրեր, ինչպես նաև արաբատառ ֆոնդի ձեռագիր պայմանագրերն (մասնավորապես՝ № 358 (արաբերեն), նրա պարսկերեն տարբերակը՝ № 272, Ալի իբն Աբու Տալիֆ խալիֆայի անունով № 357 (պարսկերեն)), և ԺԶ դարում կրկնօրինակված նրա արաբերեն տարբերակը) ու նրանց հայերեն թարգմանությունները (մասնավորապես № 2622, 2826, 6984): Մուհամմադ մարզարեի անունով քրիստոնյաներին, մասնավորապես՝ հայերին տրված արաբերեն պայմանագրերն ու նրանց պարսկերեն թարգմանությունները, կրկնօրինակվելով ԺԵ

-ԺԹ դարերում, իրենց բովանդակությամբ կապվում են արաբական նվաճումների շրջանում և ավելի ուշ տարբեր քրիստոնյա համայնքների հետ կնքված պայմանագրերի, ինչպես նաև հայերին արաբ զորահրամանատարների կողմից տրված պայմանագրերի հետ: Հայտնի է, որ 632 թ. Մուհամմադ մարզարեն Արաբական թերակղու Նաջրան քաղաքի քրիստոնյա բնակիչներին շնորհել է պայմանագիր, որով երաշխավորվում էր նրանց կյանքի, գույքի, դավանանքի, եկեղեցիների անվտանգությունը մահմեդական համայնքի հովանավորության ներքո: Բացի պայմանագիր այս՝ «մուսուլմանական» տարբերակից, որն առկա է Թ - ԺԹ դարերի մահմեդական պատմագիրների երկերում, գոյություն ունի նաև նրա «քրիստոնեական» տարբերակը: Վերջինիս պայմանները ավելի ծավալուն են և քրիստոնեամետ: Վերոհիշյալ պայմանագրի այս երկու տարբերակների պայմանները ևս առկա են արաբատառ ֆոնդի ձեռագրերում, մասնավորապես՝ N 358 ձեռագիր-պայմանագրում: Վերջինս երկալեզու է. բուն տեքստն արաբերեն է, իսկ տողատակը՝ պարսկերեն: Այն ընդօրինակված է հավանաբար ԺԷ դարում: Պայմանագրում Ալլահի մարզարենպարտավորվում էր իր զորքով և հետևորդներով պաշտպանել քրիստոնյաներին, նրանց ինչքը, ունեցվածքը, որտեղ էլ որ լինեն: Հայտնի արևելագետ պատմաբան Ա. Տեր-Ղևոնդյանի դիտարկմամբ՝ հայ պատմագրության մեջ ամրագրվել է ավանդությունն այն մասին, որ Մուհամմադ մարզարեն պայմանագիր է կնքել հայերի հետ՝ նրանց իրավունքները ճանաչելու և քրիստոնեական կրոնը ազատորեն դավանելու մասին: Հայտնի պատմաբան Հ. Անասյանը, որը համակարգել է Մատենադարան արաբատառ ֆոնդի Մուհամմադ մարզարեի անունով ձեռագրերը, գրում է, որ Հայաստանում արաբական, պարսկական, թուրքական տիրապետության շրջանում հայերը բարյացակամ վերաբերմունք և որոշակի արտոնություններ ստանալու ձգտումով, ժամանակ առ ժամանակ փորձել են մարզարեի անունով դաշնագրի վավերացված օրինակներ ձեռք բերել մուսուլման իշխողներից: Այսպիսով, պարզ է դառնում, որ Մատենադարան

տեսադարանում պահվող վերոհիշյալ վավերագրերն ու դաշնագրերը, կրկնօրինակվելով ուշ դարերում, դրական դեր են խաղացել մուսուլմանական տիրապետության տակ հայտնված հայ համայնքների կյանքում:

Մութաֆյան Կլոդ - Mutafian Claude - Мутафян Клод

Les traités de paix de l'Arménie cilicienne avec les musulmans

Vu sa position géographique, l'Arménie cilicienne ne pouvait survivre que moyennant une subtile diplomatie entre ses différents voisins grecs, francs, mongols et musulmans, concrétisée par des traités de paix. Parmi la quinzaine de tels traités connus, plus de la moitié ont été conclus avec les voisins musulmans, en particulier les plus dangereux qui furent successivement les Seldjoukides de Roûm jusqu'à leur défaite face aux Mongols en 1243, puis les Mamelouks d'Égypte. Nous nous proposons d'examiner ici les contextes de ces traités qui suivirent en général des revers militaires, et d'analyser leurs différentes clauses: cessions territoriales, statut de vassalité ou autres.

Յակոբեան Ալեքսան - Hakobyan Aleksan - Акопян Алексан

Հայոց դարձի մանրամասներն ըստ Գրիգոր Լուսաւորչի «Վարքի»
արաբերէն տարբերակի

Նախորդ դարում Ազարթանգեղոսի «Պատմութեան» յունարէն, արաբերէն, քարշունի եւ ասորերէն թարգմանութիւնների՝ մէկը միւսի յետեւից ի յայտ եկած մի շարք ձեռագրեր ցոյց տուեցին, որ բացի այդ երկի այսպէս կոչուած «ազգային» տարբերակից գոյութիւն է ունեցել նաեւ Հայոց դարձի մի այլ տարբերակով

շարադրանք, որը մասնագիտական գրականութեան մէջ անուանուել է «Գրիգորի Վարք» (կամ պարզապէս «Վարք») եւ որի հայերէն բնօրինակն առայժմ չի յայտնաբերուած:

Այդ ձեռագրերից առաջինը 1902 թ. Նիկ. Մառի յայտնաբերուածն էր Սինայի թերակղզու Սբ. Եկատերինէի վանքի մատենադարանի արաբական հաւաքածոյի հ^Մ 460 գրչագիր ժողովածոյում (Sin. Ar. 460), որի շարադրանքի տարբերութիւնն «ազգային» խմբագրութիւնից անմիջապէս արձանագրուեց զուգադիր ոռուսերէն թարգմանությամբ 1905-1906 թ. այն հրատարակած յայտնի կովկասագէտ ակադեմիկոսի կողմից: 1946 թ. Յայտնաբերուեց եւ երախտաշատ Ժերար Գարիտի կողմից Հռոմում հրատարակուեց յունարէն «Վարք»-ը (որա աշխարհաբար թարգմանութեան հրատարակութիւնը «Էջմիածին» հանդէսում 1966 թ. խնամքով կատարեցին ակադ. Հրաչյանը բարթիկեանը եւ Արամ Տէր-Ղեւոնդեանը: Հետագայում Ժերար Գարիտի եւ Միշել Վան Էսպրուի կողմից յայտնաբերուեցին ու հրատարակուեցին ասորերէն եւ քարշունի «Վարք»-երը («Վարք»-ի ասորական խմբագրութեան աշխարհաբար թարգմանութիւնը «Էջմիածին» հանդէսում 1987-1989 թթ. ներկայացրեց Լետոն Տէր-Ղեւոնդեանը): Շատ կարեւոր հանգրուան եղաւ Արամ Տէր-Ղեւոնդեանի կողմից Ազաթանգեղոսի արաբական խմբագրութեան նոր, ամրողական բնագրի յայտնաբերումը Բեյրութում՝ Սինայի արաբական ձեռագրերի միկրոֆաւստիկական շարքում (Sin. Ar. 455, ժողովածոյ, ԺԲ դար), որի՝ Նիկ. Մառի մօտ պակասող սկզբնամասի էջերը հրատարակուեցին ՊԲՀ-ում, 1973 թ.:

Ա. Տէր-Ղեւոնդեանի ուսումնասիրութիւնները նաեւ ցոյց տուեցին, որ Ազաթանգեղոսի երկի նոր խմբագրութիւնների ի յայտ գալուց յետոյ ապացուցում է Մովսէս Խորենացու տեղեկութիւնների հաւաստիութիւնն այն դէպքերում, երբ նա յղում է կատարում Ազաթանգեղոսին, սակայն ազգային տարբերակում տուեալ սիւժէնները բացակայում են: Իսկ այժմ այդ յղումները հաստատում են, օրինակ՝ Հռոմի Սեղբեստրոս պապի եւ Սբ. Թադէոս առաքեալի սիւժէնների յիշատակութեան առումով:

Ա. Տէր-Ղետնդեանի մահուանից յետոյ այդ երկրորդ արաբական ձեռագրի ուսումնասիրութիւնը շարունակեց լուսահոգի Յարութիւն Ժամկոչեանը, որն ամփոփեց աշխատանքը եւ ներկայացրեց գիտական անթերի հրատարակութիւնն ու նրա մասնեան սրբագրուած թարգմանութիւնը իր 2016 թ. ոռուերէն հիմնարար մենագրութեան մէջ: Այս վերջինը յիրաւի նոր հեռանկարների դուր է բացում Դ-Ե դարերում «Վարք» խմբագրութեան ծագման ու տարածման խնդիրների ուսումնասիրութեան համար եւ թոյլ է տալիս անվերապահօրէն զնահատել «Գրիգորի վարք»-ի արաբական տարբերակի մեծ արժեքը Հայոց դարձի, ինչպէս նաև հարեւան Վիրքի, Աղուանքի եւ «Արխազք» կոչուած Եգերք-Կողքիսի թագաւորութիւնների քրիստոնէացման իրական ժամանակագրութեան, մի քանի մասնակից անձանց անունների եւ պատմութեան բազմաթիւ մանրամասների վերհանման համար:

Այս նոր աղբիւրագիտական յենքի վրայ արդէն կարելի է վերջնականապէս ընդունել 1969 թ. Մարի-Լուիզ Շոմոնի եւ ապա Ժան-Պիեռ Մահէի, Արամ Մարտիրոսեանի, Կարէն Խովաշեանի արտայայտած տեսակէտն այն մասին, որ Հայաստանում քրիստոնէութեան պաշտօնական ընդունումն իրագործուել էր իր մահուանից 5 օր առաջ՝ 311 թ. Ապրիլի 30-ին Թրակիայի Սարդիկէ քաղաքում Գալերիոս կայսեր կողմից հրապարակուած «Հանդուրժութեան մասին» եղիկտից ընդամենը մօտ երկու ամիս անց, երբ Գրիգոր Լուսատրիչը դուրս ելաւ «ի վիրապէ» (311 թ. Յունիսի 24-ին) ու իրագործեց իր մեծագոյն առաքելութիւնը: Ընդորում՝ Հայաստանում քրիստոնէութեան պետականօրէն ընդունման այս ակտին, ըստ Եւսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմութեան»՝ 311-312 թթ. ձմռանը հետեւեց Կայսրութեան արեւելեան պրովինցիաներին տիրող կայսերակից Մաքսիմինոս Դայայի «ամոթալի» պատերազմը Հռոմի «բարեկամ եւ դաշնակից» քրիստոնէայ հայերի (=Հայաստանի) դէմ, նշուած պրովինցիաների քրիստոնէաների դէմ նրա վերսկսած հալածանքների ընթացքում:

Շահինյան Արսեն - Shahinyan Arsen - Շահինյան Արսեն

Իր ՝ Առանը վաղ միջնադարյան արաբա-մահմեդական
մատենագիրների մոտ նշված է «Āḍarbayğān al-‘ulyā» (Վերին
Ադրբեյջան) տեղանվամբ

Ադրբեյջանի հանրապետության Գիտությունների ազգային
ակադեմիայի փոխնախագահ, Ադրբեյջանի պատմության թան-
գարանի տնօրեն ակադեմիկոս Նահիյա Մամեդալի դիզի Վելի-
խանլին (*Naila Mamedali gizi Velixanlı*) Ռուսաստանի գիտություն-
ների ակադեմիայի «Вопросы истории» (Մոսկվա, 2017, № 9, էջ
110-119) ամսագրում ուսւերենով հրապարակել է գիտական մի
հոդված՝ «Еще раз о пределах Азербайджана в IX-X вв.» (Դարձյալ
Ադրբեյջանի սահմանների մասին թ - ժ դարերում) վերնագրով:
Հավելենք, որ առյն պարբերականը Ռուսաստանում հնագույն
պատմական և բարձր վարկանիշով հանդես է, որն ինդեքսավոր-
վում է հրապարակումների տվյալների միջազգային խոշորա-
գույն Web of Science Core Collection ռեֆերատիվ բազայում:

Ահա թե ինչպես է հոդվածագրի կողմից համառոտ բնու-
թագրվում հրապարակման բովանդակությունը ուսւերենով և
անգլերենով.

В исследовании... подтверждается факт принадлежности
земель севернее Аракса (современной Азербайджанской Респу-
блики)... Арану, называемому в (арабских. — А.Ш.) источ-
никах также Азербайджаном Верхним (Северным) или просто
Азербайджаном

The author... confirms the fact that territory located to the
north of river Araxes (the territory of present-day Republic of
Azerbaijan)... belongs to Arran province, which is also named in
the (Arabic. — A.Sh.) sources as the Upper Azerbaijan (Northern)
or just Azerbaijan.

□ Վելիխանլիի եզրակացությունը առ այն, որ արաբական Առանը (أَرَان [Arrān] կամ էլ الرَّان [ar-Rān], որտեղ «ar»-ը որոշիչ հոդ է) նմանատիպ տեղանվամբ է հայտնի եղել Թ-Ծ դարերի մահմեդական գրականության հիմնադիրներին, հիմնված է ծնունդով իրանական Խորասան նահանգից հեղինակավոր պատմիչ ու աշխարահագիր ալ-Յա'կուֆիի (մահ. 897ին) մոտ հայտնաբերված և միայն մեկ անգամ հիշատակվող *Ādarbayğān al-'ulyā* (آذربیجان) (العلیا) բառակապակցության վրա: Ահա թե ինչ է պնդում մեր օրերի աղբբեջանցի գիտնականը, իդում կատարելով հիջրայի 278 թ. (891/2) ավարտված *Գիրք երկրների մասինի* (كتاب البلدان [Kitāb al-buldān]) *Ասրպատական* (آذربیجان [Ādarbayğān]) ենթագլխին՝ ընդգրկված *Առաջին քառորդը, որն Մաշրիքի քառորդն է* (الرَّبِعُ الْأَوَّلُ) (وهو ربع المشرق [ar-Rub' al-awwal wa-huwa rub' al-Mašriq]) խորագրով գլխում. «ալ-Йա'կубի... упоминая о дороге, ведущей в Азербайджан, сообщал, что выехавший из Занджана мог по дороге Ардабил – Барзанд – Бейлаган доехать до Барды – главного “города Верхнего Азербайджана (Азербайджан ал-уля)”»:

Այդ իսկ պատճառով մենք որոշեցինք մանրամասն բանասիրական վերլուծության ենթարկել արաբերենով ալ-Յա'կուֆիի մոտ տեղ գտած տվյալ հատվածի վերջնամասը (وهي مدینة آذربیجان [...]wa-hiyā madīna-t Ādarbayğān al-'ulyā]), ինչպես նաև վերականգնել դրա համատեքստը՝ հիմք ընդունելով իսլամական աշխարհի համաժամանակյա մյուս հեղինակների աշխարհագրական հաղորդագրությունները: Արդյունքում մեզ ոչ միայն հաջողվեց ստանալ տվյալ հատվածի կոռեկտ ոռուսերեն թարգմանությունը, այլև՝ հայտնաբերել քննվող հոդվածում կարևորագույն մի կեղծիք: Նախյա Վելիխանլին Ստորին Արաքսի գետահովտից հարավ գտնվող և հիմնականում այսօրվա Իրանական Աղրբեջանի (պատմական Ասրպատականի) տարածքը զբաղեցնող արաբական Աձարբայջան (Ādarbayğān) նահանգի ալ-Մարաղա (المراغة [al-Marāğah]) կենտրոնը միտումնավոր փոխարինել է Առանի Պարտավ (برذعة [Barða'ah]) մայրաքաղաքով, օգտվելով երկու տեղանուների որոշակի նմանությունից արաբատառ տեքս-

տում: Ստորև մեջբերում ենք ալ-Յա'կուֆիի հիշատակվող հատվածը՝ *Ասրայատական* ենթագլխից ամբողջովին (արաբատառ բնագիրն ու լատինատառ գրադարձությունը) և մեր ոռուերեն ճշգրիտ թարգմանությունը.

فَمَنْ أَرَادَ إِلَى آذْرِبِيْجَانِ خَرَجَ مِنْ زَنجَانَ فَسَارَ أَرْبَعَ مَرَاحِلَ إِلَى مَدِينَةِ أَرْدَبِيلِ
وَهِيَ أَوَّلُ مَا يَلْقَاهُ مِنْ مَدَنِ آذْرِبِيْجَانِ، وَمَنْ أَرْدَبِيلَ إِلَى بَرْزَندَ مِنْ كُورِ آذْرِبِيْجَانِ مَسِيرَةُ
ثُلَّةٍ أَيَّامٍ وَمَنْ بَرْزَندَ إِلَى مَدِينَةِ وَرَثَانِ مِنْ كُورِ آذْرِبِيْجَانِ وَمَنْ وَرَثَانَ إِلَى الْبَيْلَقَانِ وَمَنْ
الْبَيْلَقَانَ إِلَى مَدِينَةِ الْمَرَاغَةِ وَهِيَ مَدِينَةُ آذْرِبِيْجَانِ الْعُلَيَا

[Fa-man arāda 'ilā Ādārbayğān ḥarağa min Zanğān fa-sāra arba‘ marāhil 'ilā madīna-t Ardabīl wa-hiyā awwal mā yūlqāh min mudun Ādārbayğān, wa-min Ardabīl 'ilā Barzand min kūr Ādārbayğān masīra-t ṭilṭa-t ayyām wa-min Barzand 'ilā madīna-t Wartān min kūr Ādārbayğān wa-min Wartān 'ilā al-Baylaqān wa-min al-Baylaqān 'ilā madīna-t al-Marāgah wa-hiyā madīna-t Ādārbayğān al-‘ulyā].

Тот, кто приезжает в Адзарбайджан, выходит из Занджана и идет четырьмя переходами до города Ардабила, который является первым из встречающихся ему городов Адзарбайджана. От Ардабила до Барзанда, что в провинции Адзарбайджан — три дня пути. Затем (он идет. — А.Ш.) из Барзанда в город Варсан, что также в провинции Адзарбайджан, и от Варсана до ал-Байлакана, и от ал-Байлакана — до города ал-Марага, а это уже величайший город Адзарбайджана (подчеркнуто нами. — А. Ш.):

Շուկորով Ռուստամ - Shukurov Rustam - Шукуров Рустам

Армяне в империи Великих Комнинов (1204—1461)

В докладе анализируются данные греческих понтийских источников периода Великих Комнинов, содержащие данные об армянском населении Понта. Наиболее важны из этих ис-

точников акты Вазelonского монастыря в Мацуке — континентальном регионе, лежавшем южнее столицы империи Трапезунда. Базируясь на данных антропонимики, автор попытается проанализировать численность и социальную роль армянской общины в сельских районах византийского Понта. Весьма интересной также представляется группа этнических армян, переселившихся в Понтийский регион из Великой Армении, которая тогда находилась под мусульманской властью.

Չեշերի Օռլեան - Cecere Giuseppe - Чечере Джузеппе

“The Caliph of the Armenians”: Images of the Catholicos of Hromkla in Arabic Mamluk Sources

The city of Hromkla, in Arabic Qal‘at al-Rūm («Castle of the Romans/Byzantines» but also «Castle of the Christians» *tout court*), was very important in the context of the Mamluk-Armenian Wars, both strategically (due its position on the Euphrates) and symbolically, as it was the seat of the Armenian Catholicos. Therefore, its conquest (1292), which resulted into the capture of the Catholicos, was celebrated enthusiastically by Mamluks, and the Sultan emblematically changed the city’s name from Qal‘at al-Rūm into Qal‘at al-Muslimīn («Castle of the Muslims»).

Arabic and Armenian sources proposing different representations of this crucial episode, the present paper focuses on Mamluk narratives on the attitudes and fate of the Catholicos during the battle and after it. In this framework, special attention is paid to the expressions by which the notion of *catholicos* was “translated” into Arabic by different authors. This terminological item seems to be highly relevant from an ideological viewpoint. In this regard, one point seems to be particularly interesting: the use of so striking an expression as “Caliph of the Armenians” (*khalīfat al-Arman*),

instead of the more common “Patriarch of the Armenians”, by both the Muslim historian Ibn al-Dawādārī (fl. first half of the fourteenth century) and the Coptic historian Mufaddal Ibn Abī l-Fadā'il (d. after 1358).

As I endeavor to show in this paper, the reasons behind such choice could be different for the Muslim author and the Coptic one. On the one hand, one may argue that a Muslim writer in Mamluk times could adopt such formula with a merely descriptive intention, based on perceived parallelism between the function of the *Catholicos* as religious leader of the Armenians (the King being their political leader) and that of the Caliph as religious leader of the Muslims, whereas the Sultan, at least in the concrete historical situation of Mamluk society, was acting as political leader of the concerned community. On the other hand, in the case of a Coptic Christian writer (also living under Mamluk rule) such as Mufaddal, the use of the word “Caliph” with reference to the spiritual leader of another Christian community seems far from being a “naïve” choice. Indeed, several elements seem to suggest that it was a conscious and voluntary ideological choice. For sure, the use of such formula by Mufaddal cannot be explained as a simple and somehow “unconscious” effect of Mufaddal’s large – but not exclusive – reliance on Ibn al-Dawādārī as a source on the battle of Hromkla/Qal‘at al-Rūm. In fact, the alternative formula as “Patriarch of the Armenians” (*batrak al-Arman*) is largely attested in other Muslim sources on this episode certainly used by Mufaddal. As an example, suffice it to quote the following passage from al-Nuwayrī: «In the city (of Qal‘at al-Rūm), there was also the Patriarch of the Armenians (*batrak al-Arman*) and he was made prisoner» (Nuwayrī 2005, p. 89). In other words, in Mufaddal’s sources the alternative expressions *khalīfat al-Arman* and *batrak al-Arman* had already been used, in different authors, in order to “translate” the notion of *Catholicos* in terms that could be easily understood by an Egyptian readership. Therefore, in choosing the

notion of “Caliph” versus that of “Patriarch” as a definition for the term *Catholicos*, Mufaddal was probably pursuing a theologically grounded polemical objective: he was implicitly denying the qualification of “Patriarch” to the religious leader of a Christian community other than the Coptic Church. In addition, a political aim may also be envisaged behind this terminological choice. Indeed, as I show in analyzing a wide range of references to non-Coptic Christian groups in Mufaddal’s work, the author seems intensively engaged in de-Christianizing (and, at times, even “de-humanizing”) the images of those Christian groups and populations that were fighting against the Mamluks either in the Crusades or in the “Mongolian” wars (to which the Armenian-Mamluk conflict was linked). In doing this, he probably aimed to deny any possible association between foreign Christian groups – that were enemies to the Mamluk State- and the Egyptian Coptic Christians, that he wanted to represent as loyal subjects and supporters of the Mamluks and of the socio-political order that the Sultan “embodied” and preserved. Thus, he was somehow trying to redefine the perceived “nature” of those conflicts from a “religious” one (Christians vs. Muslims) into a merely “ethnic” and “political” one (foreign enemies vs. subjects of the Mamluk State).

At the opposite end of the spectrum of different translations of the terms *Catholicos* in Medieval Arabic sources, another expression is taken into careful consideration, although it is used in a source slightly prior to the Mamluk era. It is the odd wording “Caliph of Christ” that the geographer Yāqūt (d. 1229) applies to the Armenian *Catholicos* when describing the city of Hromkla/Qal‘at al-Rūm in his famous *Kitāb mu ‘jam al-buldān*. There, he defines the *Catholicos* not only as *baṭrak al-Arman* (“Patriarch of the Armenians”) but also as *khalīfat al-Masīḥ* (*‘inda-hum*): «Caliph of Christ (according to what they believe)». Far from being polemically motivated, such term seems to express a “philological” attitude on the part of the Muslim author, who exploits the

etymological meaning of the word *khalīfa* ("lieutenant, vicar") in order to provide an accurate Arabic translation of the Christian theological notion of "Vicar of Christ".

Պանագիոտոպուլոս Անտ. Իոաննիս -
Panagiotopoulos Ant. Ioannis -
Панагиотопулос Ант. Иоаннис

The heresy of the "Armenians" and the question of Azim
(Unleavened Bread)

A public theological dialogue on Azim (Unleavened Bread) developed through the relative work of John Damascene in the 7th century. The reason for this dialogue was given by the positions of the "Armenians' heresy". The dialogue continued so that in the 9th century. We have a new work on this field by Methodius of Constantinople (843-847), which remains unpublished. The aim of our contribution will be both, from one side to exam the context of dialogue with all its theological and historical characteristics, at the other side to look for the networks through this dialogue was developed in the East, and which later will be further developed with the Western Church!

Սահակյան Կարոլինա - Sahakyan Karolina –
Саакян Каролина

Օսմանյան «Բարեփոխումների հանձնախմբի»
այցելությունը Կիլիկիա 1865 թ. (Ահմեդ Զևդեք փաշայի և Մ.
Քելէշեանի աշխատությունների համեմատական
վերլուծություն)

Ժթ դարն Օսմանյան կայսրության պատմության մեջ ընդունված է անվանել բարենորոգումների՝ թանգիմարթի շրջան: Լայնածավալ տերության ծայրամասային նահանգներում փոփոխություններ իրականացնելու նպատակով 1865 թ. ստեղծվում է հատուկ հանձնախումբ՝ օժուված ու պահան և վարչարարական իրավասություններով:

«Բարեփոխումների հանձնախմբի» ստեղծման և Զեյթունում նրա գործունեության մասին պատկերացում կազմելու համար հույժ կարենք նշանակություն ունեն երկու սկզբնադրյուրներ՝ Ահմեդ Զևդեր փաշայի «Մանուկար» և Միսաք Քելեշեանի «Միս-Մատեան» աշխատությունները, որոնց վերլուծությունն էլ ընկած է սույն զեկուցման հիմքում:

Սահակյան Քնարիկ - Sahakyan Knarik - Саакян Кнарик

Մատենադարանի արաբատառ ֆոնդի արաբերեն
քերականական ձեռագրերը

Է դ. արաբական հաղթարշավներին զուգընթաց մեծ տարածում ստացավ նաև արաբերենը՝ որպես կրոնի, կառավարման, կրթության և գիտության լեզու: Արաբերենով Ղուրանի լեզուն համարվում էր կատարյալ, քանի որ, ըստ ավանդույթի, այն թելադրվել էր Մուհամմադին Ալլահի կողմից, հետևաբար արաբերենն այլ լեզուների համեմատ գերադաս դիրքում էր գտնվում: Արգելված էր Ղուրանի թարգմանությունն այլ լեզուների: Արաբերենի անաղարտ պահելը դասվում էր պետական կարևորագույն խնդիրների շարքում: Ը դ. Արաբական խալիֆաթի կարևորագույն մշակութային կենտրոններում՝ նախ Բասրայում, ապա Քուֆայում, հետագայում նաև Բաղդադում, հիմնադրվում են լեզվաբանական դպրոցներ, որոնց նպատակն էր մշակել արաբերենի ուսումնասիրման հստակ համակարգ՝ բացառելու համար գրա-

կան լեզվի աղավաղումները, հատկապես Ղուրանի ընթերցանության ժամանակ: Քերականական այս երկու ուղղությունների՝ դպրոցների միջև առկա էին տարածայնություններ, որոնք հիմնականում վերաբերում էին արաբերենի քերականական համակարգի նկարագրման և կանոնավորման հարցերին: Բարեցիները խստորեն հետևում էին նախախսամական պոեզիայի և Ղուրանի դասական լեզվի կանոններին, իսկ ընդունված նորմերից շեղումը համարվում էր լեզվի աղավաղում: Քուֆայի դպրոցի ներկայացուցիչներն առավել մեղմ էին այս հարցում և հաճախ իրենց դրույթները հիմնավորում էին խոսակցական լեզվում գործող օրենքներով:

Մեզ հասած առաջին քերականական երկը Բարայի դպրոցի ներկայացուցիչ Սիբառւեյհի (մահ. 794թ.) «Ալ-Քիթաֆ» («Գիրք») աշխատությունն է: Այս գրքում հեղինակը, ի մի քերելով իր նախորդների փորձը, մանրամասն անդրադառնում է արաբերենի քերականության բոլոր հարցերին՝ շարահյուսությանը, ձևաբանությանը, բառակազմությանն ու հնչյունաբանությանը:

Ծ դ. առաջին կեսին Բաղդադում զարգանում է լեզվաբանական երրորդ ուղղությունը՝ քերականական խնդիրների հետ մեկտեղ լուսաբանվում է բառագիտական հարցեր՝ բառի և նրա նշանակության կապի, բառի բառակազմական կառուցվածքի, բառի և նրա իմաստի հետ կապված:

Հետագայում արաբական լեզվաբանական մտքի զարգացումը շարունակվում է Անդալուսիայի, իսկ ուշ միջնադարում՝ Եգիպտոսի և Սիրիայի լեզվաբանական դպրոցներում, որտեղ լեզվաբաններն աշխատում էին հիմնականում նախորդների երկերի մեկնության և պարզաբանման ուղղությամբ:

Այսպիսով, իւլամի տարածմանը զուգընթաց առաջին իսկ դարերից արաբերենի ուսումնասիրությունը առանձնահատուկ տեղ է գրավում գիտության այլ ճյուղերի կողքին: Այդ մասին են վկայում մեզ հասած արաբերենի քերականությանը նվիրված մի շարք ձեռագրեր: Մատենադարանի արաբատառ հավաքածուում

պահվում է արաբերեն լեզվաբանությանը նվիրված 300-ից ավելի նմուշ, այդ թվում այս ասպարեզում հայտնի ներկայացուցիչների հեղինակած աշխատություններ, մեկնություններ, դասագրքեր, բառարաններ: Մաշտոցյան Մատենադարանի Արաբերեն քերականական ձեռագրերի նկարագրության և ցուցակագրման աշխատանքներն ընթացքի մեջ են: Հիմնվելով նախնական ուսումնասիրության վրա՝ կարելի է արձանագրել, որ հավաքածուն հարուստ է արժեքավոր ձեռագրերով: Այս մասին են վկայում արաբական լեզվաբանական ավանդույթի ակնառու ներկայացուցիչների և նրանց անվան հետ առնչվող աշխատությունները, ինչպես, օրինակ՝ ալ-Զամախշարին, Իբն Մալիքը, Իբն Հիշամը, ալ-Զուրջանին, ալ-Սույուտին, ալ-Ազհարը և ուրիշներ: Մատենադարանում է պահվում նաև Ժ. դ. Եգիպտացի գիտնական Մուհամմադ բեն Ալի ալ-Մաբանի քերականական երկի ինքնագիրը՝ երկու հատորով, շարադրված 1778-79 թթ.:

Սաֆրաստյան Ռուբեն - Safrastyan Ruben - Սաֆրաստյան Ռուբեն

«Հալիլ Մենթեշեի հուշերը» որպես աղբյուր Հայոց ցեղասպանության ու Հայկական հարցի մասին

Հալիլ Մենթեշեն (1874-1948 թթ.) մաս է կազմել երիտրուքական կուսակցության և Օսմանյան կայսրության բարձրագույն ղեկավարության նեղ շրջանակի՝ զբաղեցնելով խորհրդարանի և պետական խորհրդի նախագահի, արտաքին, արդարադատության ու ներքին գործերի նախարարի պաշտոնները: Նա մասնակցել է Հայոց ցեղասպանության մասին որոշում ընդունելու գործընթացին, տեղյակ է եղել այդ հրեշտավոր հանցագործության մանրամասներին և որպես արտաքին գործերի նախարար պաշտպանել և արդարացրել է այն միջազգային թատերաբեմում: Պատահական չէ, որ նրա անունը տեղ է գտել Հայոց ցեղասպանության համար գլխավոր պատասխանատունների ցանկում:

Նա գլխավորել է նաև թուրքական պատվիրակությունը 1918 թ. մայիս-հունիս ամիսների Բարբումի բանակցություններում։ Հանրապետական շրջանում Հալիլ Մենթեշեն տարիներ շարունակ ընտրվել է Թուրքիայի խորհրդարանի անդամ։

Հալիլ Մենթեշեի հուշագրությունները առաջին անգամ մամուլում հրատարակվել են 1946 թ., առանձին գրքով լույս են տեսել 1986 թ.։ Նրանց վերլուծությունը հնարավորություն է տալիս ավելի խորը հասկանալու օսմանյան իշխանությունների հակահայ քաղաքականության մի շարք առանձնահատկություններ։

Արուն Մայքլ - Stone Michael - Стоун Майкл The Corpus of Armenian Inscriptions from the Holy Land and The Sinai

The corpus of Armenian Inscriptions from the Holy Land is in the process of being brought to completion. The Armenian inscriptions are of three chief types:

(i) Dedicatory, formal inscriptions; (2) pilgrim graffiti; and (3) other inscriptions of various types.

The inscriptions in the corpus date from the mid-fifth century, ca.440 or slightly before, down to the middle of the nineteenth century. These oldest inscriptions are pilgrim graffiti found on rocks in the Sinai Desert and underneath the Latin Basilica of the Annunciation on Bethlehem. Other somewhat later inscriptions are found in mosaic floors. A relatively newly discovered one is from the late fifth to the early sixth-century, and other mosaic inscriptions are found dating from the sixth and seventh centuries. The latest of these is the Eustathius Mosaic discovered in the area north of the Old City's Damascus gate. This is dated by an Arabop-Byzantine coin found in the mortar upon which the mosaic was laid. Inscriptions include dedications by the royal house of Cilicia, those of wooden doors in the Cathedral of

the Saints James, and others. New inscriptions from the first millennium CE discovered in archeological excavations will be included as well as substantial numbers of funerary, dedicatory and other inscriptions from the present Armenian Quarter, from Armenian institutions in Jaffa, Ramle, and Lod.

I shall touch on the progress of the work and the procedures.

Տերեան Աբրահամ - Teryan Abraham -

Տերյան Աբրաամ

«Վարք Մաշտոցի» շուրջ նոր նկատողութիւններ

Ներկայացված երեք դիտողությունները (Ժանրային, բնագրային և ժամանակագրական) ստացվում են Կորյունի «Վարք Մաշտոցի» վերջերս կատարված անզլերեն նոր թարգմանության ու մեկնաբանության աշխատանքից: Առաջին դիտարկումը հետեւում է Կարապետ Մելիք-Օհանջանյանի դիտարկմանը, ըստ որի՝ «Վարք»ը հիմնականում պատկանում է ներբողական ժանրին: «Վարք»ի ընդհանուր պատկերացումից հետո մենք ցույց տվեցինք, որ սա շարունակվում է նախատեսված կազմի շարադրական մանրամասնության մեջ, երկը բերանացի կերպով ներկայացնելու մտադրությամբ՝ վերջնական գրավոր կազմին չհասած:

Երկրորդ դիտարկումն այն է, որ բնագրի 23-րդ գլխում (Աբեղյան գլ. 22 [84.7-16]) ընդգրկված է կրկնակի ինտերպոլյացիա:

Երրորդ դիտարկումն ընդհանուր ժամանակագրության մեջ է, հատկապես Սասանյան արքաների սինխրոնիզմային հղումներում: Ակնհայտ անհամապատասխանությունները վերանում են, երբ գիտակցում ենք, որ Ոսկեղարյան հայ հեղինակները չեն հաշվում զահակալության տարին (նրանք թագավորության առաջին տարին հաշվում են առաջիկա նոր տարվանից սկսած):

Յորբածօղլու Պանտելեյմոն - Tsorbatzoglou
Panteleimon - Շօրբածօղլու Պանտելեյմոն
Germanus Patriarch of Constantinople (650-730) and Stephen
Metropolitan of Siwni or Siwnik (685-735)

Stephen, the son of a higher clergyman, was born around 680 or 685 in the town of Dvin, Armenia. Later, he travelled to the West for advanced studies. It is a fact, however, that he was in Constantinople between 712 and 718, where, along with a man called David –a member of the imperial court, referred to as ὑπάτος καὶ κηνάριος, Consul and Kenarios, i.e. the grandee charged with the superintendence of the imperial table– he translated the *Corpus Areopagiticum*. Stephen must have returned to Armenia in late 718, since the Arabs besieged Constantinople for more than a year – from early summer 717 to late August 718.

It is not possible to define the time, when the relationship between Stephanos and Germanus started. In my opinion, they must have met right after Stephanos settled in Constantinople, i.e. when he befriended the Armenian community and the literary circle of the so-called “Philhellenic School” and started to cooperate with the imperial officer, Kenarios David. I believe that he must have met Patriarch Germanus very early on and that the two men appreciated each other deeply. Judging by the records provided by the biographers, a strong friendship and cooperation must have developed between the two men. According to a record, Patriarch Germanus invited Stephanos to draft a testimonial report of the Armenian Church in order to learn first-hand its theological principles.

There is a correlation between the works of Germanus and Stephanos –the original works of the former and the new translations of the latter. Germanus I wrote comments on *Corpus Areopagiticum* and he also wrote a *Commentary to the Divine*

Liturgy and the work *On Predestined Terms of Life*. Stephanos translated the whole *Corpus Areopagiticum*, and wrote *Scholia* on it. He also wrote a *Commentary on the Armenian Daily Office* and finally he translated the work of Gregory of Nyssa, *On the Making of Man*, as well as the work of Nemesius of Emesa, *On the Nature of Man*, both of which resonate in the above mentioned work *On Predestined Terms of Life* of Germanus.

When Stephen returned to Armenia, he brought with him, among other things, a dogmatic letter sent by Germanus to the Armenian Church, in which he presented the principles of the Orthodox Church on the basis of the IVth and VIth Ecumenical Councils on the one hand and he invited them, within the above mentioned framework, to unite with the Orthodox Church on the other.

Upon his return, Stephen was appointed bishop of Siwni or Siwnik and he undertook the task to respond to the letter of patriarch Germanus. The response did not add anything particular to what was already known; it repeated the noted objections against Chalcedon and the accusations for Nestorianism, but it also provided sufficient answers to the accusations for Apthartodocetism the Armenian Chruch was charged with. It is not known whether this letter ever came to the hands of Germanus in Constantinople. In any case, the *Armenian Synaxarium* confirms that Stephen' answer was read by the Greeks, who were indeed surprised by his brilliant theological knowledge. The correspondence of Germanus with the Armenians is also mentioned in later Synods of the Armenian Church (1165-1178 and 1178/9), in which Stephanos' principles were widely used.

Also, upon his return to Armenia, Stephanos also made other translations and annotations in the works of Ezekiel, Job, the Book of Leviticus, and the Four Evangelists. Besides, he is attributed with the translation of various theological treatises, possibly five,

written by Athanasius of Alexandria, on request of patriarch Ioannis of Otsun, as part of the preparation.

Վարդազարյան Օլգա - Vardazaryan Olga - Վարդազարյան Օլգա

Աստվածուրացությունը և նովատական խնդիրը միջնադարյան
Հայաստանում

«Կանոնք Սեւանտեայ» կամ «Թուղթ Սեւանտեայ եպիսկոպոսի գլուխք ԺԴ» (Կանոնագիրք Հայոց, Ա խմբ., ԺԹ խումբ) պարունակում է մի դրույթ (կանոն Ը) ուրացողների վերաբերյալ, որն իր խստությամբ միանգամայն գերազանցում է նույն խնդրին վերաբերող «Կանոնագրքի» այլ հոդվածները՝ Անկյուրիայի ժողովի կանոնը, որն ընդունված էր Լիկինիոսի հրահրած հալածանքների առիթով, Բարսեղ Մեծի, ինչպես և դրան համապատասխանող Թաղդեոս առաքյալի, Գրիգոր Աստվածաբանի և Երկրորդ Նիկիական ժողովի ժբ կանոնները. «Եթէ ոք ի հաւատս կացցէ ամիսս երկու եւ դարձցի յետս, նզովեալ եզիցի: Որոշեցէք զամենայն ատուրս կենաց իւրոց իբրև զշարագործ, զի զաւանդ Տեառն իւրոյ կորոյս եւ ընդ ապաշխարողս մի՛ խառնէք յափառեան»: Համեմատելով այս դրույթը Սոկրատ Սքոլաստիկոսի «Եկեղեցական պատմության» մեջ նովատականների մասին հաղորդած տեղեկությունների հետ, կարելի է մտածել, որ խնդրո առարկա կանոնը ծագում է նովատական կամ նովատականությանը հարազատ միջավայրից: Մինչդեռ ինքը Սոկրատը նշում է, որ նովատականները հին բարեպաշտության կրողներ են, ուստի ենթադրելի է, որ այն, ինչ վերագրվում էր նրանց իբրև նորամուծություն, իրականում հնագույն քրիստոնեական սովորույթ է: Այս լուսիներքո հետաքրքիր է դիտել որոշ հայ հեղինակների, հատկապես Ղազար Փարագեցու պատկերացումներն աստվածուրացության վերաբերյալ (Վարդան և Վահան Մամիկոնյանների մարտիրոսանալու ձգտումը՝ կեղծ ուրացությունը քավելու համար ևն):

Փորձ է արվում նաև որոշել, թե որն էր այն «աղանդը», որը Փարպեցուն վերագրում էին նրա հակառակորդները:

Փաշայան Արաք - Pashayan Arax - Пашаян Аракс Հայաստան-արաբական աշխարհ համագործակցության հեռանկարները

Զեկուցման մեջ քննարկվելու են 1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո արաբական աշխարհի հետ հաստատված համագործակցության զարգացման ընթացքին և առանձնահատկություններին առնչվող խնդիրներ: Ներկայացվելու են արաբական աշխարհում Հայաստանի հնարավորությունները քաղաքական և քաղաքակրթական առումներով, գոյություն ունեցող մարտահրավերներն ու խոշընդոտները, դիտարկվելու է հայ համայնքների գործոնը հայ-արաբական հարաբերությունների զարգացման հարցում: Ընդհանուր առմամբ անդրադարձ է կատարվելու Հայաստանի արտաքին քաղաքականության արաբական ուղղությանը, խոսվելու է չօգտագործված հնարավորությունների, նոր իրողությունների և առհասարակ տարբեր հարթակներում համագործակցության հեռանկարների մասին:

STUDIES ON THE ORIENTAL SOURCES AND HISTORIOGRAPHY
IN ARMENIA (EARLY XXI CENTURY)

INTERNATIONAL CONFERENCE DEDICATED
TO THE 90TH ANNIVERSARY OF ARMENOLOGIST-ORIENTALIST
ARAM TER-GHEVONDIAN (1928-1988)
2019, June 20-22

ВОСТОЧНОЕ ИСТОЧНИКОВЕДЕНИЕ И ИСТОРИОГРАФИЯ В
АРМЕНИИ В НАЧАЛЕ ХХІ ВЕКА


МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ, ПОСВЯЩЕННАЯ
90-ЛЕТИЮ АРМЕНОВЕДА-ВОСТОКОВЕДА
АРАМА ТЕР-ГЕВОНДЯНА (1928-1988)
2019, июнь 20-22

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՐԵՎՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՊԱՏՄԱԳՈՒԹՅՈՒՆԸ ԻԱ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՄԻԶԱՋԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱԳԵՏ-ԱՐԵՎԵԼԱԳԵՏ
ԱՐԱՄ ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ (1928-1988) ԾԱՆՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ
2019 թ., հունիս 20-22

Հրատ. պատվեր № 947
Ստորագրված է տպագրության՝ 06.06. 2019թ.:
Չափսը՝ 60 x 84 $\frac{1}{16}$, 5 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 100 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

105108



ISBN 978-5-8080-1388-9

A standard linear barcode representing the ISBN 978-5-8080-1388-9.

9 785808 013889